

4687

3K171

g - 64

728

86

ВОЗВРАТИТЕ КНИГУ НЕ ПОЗЖЕ

обозначенного здесь срока.

9 346				

Գ. ԶԻՆՈՎՅԵՎ

Ի՞նչ Պիճի ԻՄԱՆԱ ՅԵՎ ՔիՃԵ
Հ.Կ.Կ. (Բ) ՄԵԶ ՄՏՆՈՂ ԱՄԵՆ
ՄԻ ԲԱՆՎՈՐ

ՁՁ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

Ընթեկաց—1926

ԿՈՄՅԵՐԻՏՄԻՈՒԹՅԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ № 42

14 NOV 2009

Գ. ԶԻՆՈՎՅԵՎ

15 JUL 2005

ՀԿՊՀ

Զ-64

1003
13339

Ի՞նչ Պիտի իւմաս Ձեզ Քիմէ
ՀԿԿ. (Բ) ՄԵԶ ՄՏՆՈՂ ԱՄԵՆ
ՄԻ ԲԱՆՎՈՐ



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ - 1926

13.04.2013

4687

Ի ԿՈՄՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Ամենից առաջ մի քանի խոսք այն
մասին, թե ինչ բան ե մեր կուսակ-
ցությունը։ Կուսակցության մեջ մըտ-
նող ընկերները կուսումնասիրեն մեր
կուսակցության պատճենությունը վոչ թե
մեկ ամսվա, յեզ գուցե վոչ ել մեկ տար-
փա ընթացքում։

Նրանք, ովքեր կցանկանան դառնալ
Ռուսաւանի կոմմունիստական կու-
սակցության գիտակից անդամներ, պետք
ե տարիների ընթացքուն ուսումնասի-
րեն մեր կուսակցության պատճեն-
թյունը և մասնավորապես Վլադիմիր
Իլիչ Լենինի մեծ դերն արդ պատճե-
թյան մեջ։ Յես միայն մի քանի ընդհա-
նուր գծերով կհիշատակեմ այն ամե-



Գրառեպ. № 341ր.

№ 350

Տիրաժ 4,000

Դիմումատիր յիրկորդ տպարան - Յերևանում

Նակարեորը, ինչ մեր կուսակցության
պատմության մասին պետք ե իմանա
կուսակցության շարքերը մտնողը:

Կոմմունիստական մանիքես

Կոմմունիստական կուսակցությունը,
իբրև բանվոր դասակարգի միջազգային
ուսմունք, ունի զարգացման մոտ 80 տա-
րի։ Մենք իրավունք ունենք կոմմու-
նիստական մտքի ծագումը՝ իբրև պրո-
լետարիատի միջազգային ուսմունքի
ծագում, հաշվելու այն որվանից, յերբ
լույս տեսավ հայտնի կոմմունիստա-
կան Մանիֆեստը, վոր գրել են բան-
վոր դասակարգի մեծ ուսուցիչներ
Մարքուր և Ենգելսը։

Այդ մանիֆեստը, վոր մինչև հիմա
յել ամբողջ աշխարհի կոմմունիստների
ծրագրի հիմքն ե կազմում, գրված ե
յեղել 1847 թ., այսինքն մոտ 80 տա-
րի առաջ։

Այդ ժամանակվանից սկսած՝ կոմմու-

նիզմը վերապրել ե թե վերելքի տա-
րիներ և թե ծանը պարտությունների
ամբողջ շրջաններ, սակայն կոմմունիս-
տական մանիֆեստի առաջ գալուց հե-
տո՝ միջազգային կոմմունիզմը չի իջել
պատմության բեմից։

Առաջին ենտերնացիոնալ

Իսկ յեթե կոմմունիզմի պատմու-
թյունը հաշվելու լինենք առաջին ին-
տերնացիոնալի կազմակերպման որից՝
այդ գեղքում ել, դարձյալ մենք կու-
նենանք 60 տարվա աշխատանք։ Առա-
ջին ինտերնացիոնալը, կամ ինչպես նա
կոչվում եր՝ Բանվորների Միջազգային
Ընկերությունը կազմվել ե 1864 թ.
Լոնդոնում, կարլ Մարքսի ղեկավարու-
թյամբ։ Դա բանվորների առաջին մի-
ջազգային կազմակերպությունն եր, վոր
իր առաջ գրել եր՝ միայն ավելի ընդ-
հանուր ձևով՝ նույն խնդիրները, վո-
րոնք մեր առաջ կանգնած են հիմա։

Այդ կազմակերպությունն աշխատեց
մոտ 10 տարի:

Նա վոգեվորեց Փարիզի բանվորների
առաջին ապստամբությունը, 1872 թ.
Փարիզյան կոմմունան, և ապա՝ մի-
ջազգային բուրժուազիայի կողմէց քայ-
քայման յենթարկվելով, ցած իջավ պատ-
մության բեմից:

Սօվիատանի Սօվատագրման խմբակը յեզ
Ռ. Ս. Դ. Բ. Կ-յան Լ-ին համագումարը

Վերջապես՝ յեթե մեր կուսակցու-
թյան պատությունը հաշվելու լինենք
առաջին բանվորական՝ կամ, ինչպես
այն ժամանակ մենք մեզ անվանում
ենքնք, Սոցիալ Դեմոկրատական խմբա-
կի առաջացման որից՝ այն ժամանակ
ել մենք կոնենանք զարգացման մոտ
40 տարի:

Թուսաստմում բանվորների մարք-
սիստական առաջին խմբակը կազմվել
է 1883 թվին, հանգույցյալ Պեխանովի
և նրա աջակիցների ջանքով: Այդ կազ-

մակերպությունը կոչվում եր «Աշխա-
տանքի Սօվատագրման խմբակ»:

Իսկ յեթե վերցնենք ավելի նեղ ըլր-
ջանակ՝ մեր կուսակցության առաջին
համագումարից սկսած և վոչ թե վե-
րոհիշյալ խմբակից, այդ գեպքում ել
ինչպես գուք գիտեք, 1823 թվին մենք
տոնեցինք կուսակցության 25-ամյա
հորելյանը: 1898 թ. անլեգալ կերպով
կանչվեց Ռուսաստանի Սոցիալ Դեմոկ-
րատական Բանվորական կուսակցու-
թյան առաջին համագումարը: (Այն
ժամանակ մեր կուսակցությունը կոչ-
վում եր Ռ. Ս. Դ. Բ. Կ., այսինքն
Ռուսաստանի Սոցիալ Դեմոկրատական
Բանվորական կուսակցություն):

Բայլը վիկեների կուսակցության
Ռ. Ս. Դ. Բ. ծագումը

Ընկեր Լինինը, վոր ավելի քան 30
տարի աշխատեց Բանվորական կուսակ-
ցության մեջ իր գործունեյության հենց
առաջին տարիներից սկսեց հիմք դնել

իսկական հեղափոխական, իսկական բանվորական բայլշկիլյան կուսակցության: Բանվորական, ինչպես այն ժամանակ կոչում ելին՝ սոցիալ դեմոկրատական կուսակցության շրջանում, ընկեր Լևինը սկսեց հավաքել կուսակցության ավելի կայուն պրոլետարական մասը և 1903 թվին կազմվեց կուսակցության բայլշկիլյան թև, վործնունդ եր առել մենշևիկների հետ ընդհանուր մի կազմակերպությունից:

Այսպիսով՝ մեր կուսակցությունը, համենայն գեպս, ունի ավելի քան 20 տարվա պատմություն, և այդ տարիները յեղել են վոչ թե թմբության, այլ մեծ պայքարի տալիների: Այդ 20 տարվա ընթացքում մուսաստանը վերապրել է յերկու մեծ պատերազմներ 1904-05 թվականների պատերազմը Յապոնիայի դեմ և 1914-17 թվականներին իմպերիալիստական պատերազմը: Այդ նույն ժամանակամիջոցում մու-

սաստանը վերապրել է նաև յերեք մեծ Հեղափոխություն: — 1905., 1917. թ. թ. Փետրվարյան Հեղափոխությունը և 1917 թվի Հոկտեմբերյան հեղափոխությունը: Յերկու այդպիսի տասնամյակները հավասար են յեկու այլ հարյուրամյակների: Այստեղ մեր աչքի առաջ ծընվում եր նոր Ռուսաստանը: Այսպիսով, մեր կուսակցությունը ստեղծվում եր թշնամու կրակի տակ՝ ցարիզմի տարիներում, Ռուսանովյան ռեակցիսյի ծանրը շրջանում:

Այդ պատճառով մենք պետք ենք տեսնանք ու հիշենք, վոր մենք կանգնած ենք մեր նախորդների վոսկորների վրա, վոր մեր յերկրի լավագույն բանվորների ամբողջ սերունդներ, վորոնք մեր կուսակցության հիմքն ելին դնում, դրա փոխարեն հատուցում ելին բանտի ու աքսորի յերկար տարիներ և կախաղան ելին յեխում:

Ինչպես և զարգացել մեր կուսակցությունը՝ պայքարում

Գաղտնի աշխատանքի տարիների ընթացքում մեր կուսակցության անդամների թիվը, ի հարկե, չնչին երթերք ցարիզմը տապալվեց, Փետրվարյան հեղափոխությունից անմիջապես հետո, մեր կուսակցությունն ամբողջ Ռուսաստանում ուներ միայն 50.000 անդամ։ Անգայ 1917թվին, յերբ մենք արդեն իշխանության զրավժան նախորյակին ելինք՝ մեզ մոտ, ամբողջ Ռուսաստանում, կար վոչլրիվ 200.000 անդամ, իսկ այժմ՝ միայն Լենինգրադում ունենք 60.000 անդամ։ Բայց այնուամենայնիվ, իր կազմով փոքր այդ կուսակցությունն իր հետեւ տանում եր ամբողջ բանվոր դասակարգը։

Ի՞նչպես պատահեց այդ։ Այն ընկերները, վորոնք մինչեւ Հեղափոխությունը աշխատում ելին գործարաններում,

կհիշեն, թե ինչպես հինգ կամ տասն առաջավոր և անվախ բանվորներ իրենց հետեւ տանում ելին ամբողջ գործարանը։ Կուսակցությունը փոքր եր, նաշեր կարողանում տարածվել—ցարիզմը նրան խեղզում եր, ամեն մի քայլափոխում բանտարկում եր կուսակցության անդամներին։ Բայց կուսակցության մեջ համախմբված ելին բանվոր դասակարգի լավագույն ներկայացուցիչները։ Բանվոր դասակարգի մեջ լեղած ամենազրագետ, ամենակայուն, ամենաանվիրված, ինքազոհության համար ամենից ավելի պատրաստ, ամենաազնիվ ու անվախ, ամենաազաղափարական տարրերը գտնվում ելին մեր կուսակցության շարքերում։ Մեր կուսակցությունը, իբրև մի սպունգ՝ բանվոր դասակարգից իր մեջ եր քաշում նրա այենալավագույն մասը, Հատիկ հատիկի յետեւ մեր կուսակցությունը՝ ընկ. Լենինի գլխավորությամբ, բո-

լոր գործարաններից, բոլոր Փարքի-
կաներից հավաքում եր ամենատոկուն,
ամենակայուն բանվորներին և սիաց-
նում եր նրանց այն մեծ կազմակեր-
պության մեջ, վոր հետզհետե գրավեց
բանվոր դասակարգի ոժանդակությու-
նը և հետո՝ բուրժուազիայի ձեռքից
խլեց իշխանությունը, անցկացրեց մեր
յերկիրը ամենածանր չարչարանքների
տարիներից և վերջապես հանեց նրան
գեղի լայն ճանապարհ։ Ահա թե ին-
չու Ռ. Կ. Կ.-յան շարքերը մանող ա-
մեն մեկն ամենից առաջ պետք ե ի-
մանա և հիշե, վոր իրենից չի սկսվում
մեր կուսակցության պատմությունը։
Բացելով մեր կուսակցության դուռը՝
ամեն մի ընկեր պարտավոր ե հիշել
բանվորների այն սերունդների մասին
վորոնք մեզ համար հարթում ելին ճա-
նապարհը - շնորհակալությամբ պետք
ե հիշվի այն հերոսական կոփվը, վոր
տանում ելին Ռուսաստանի հարյուր ու

հազարավոր լավագույն պրոլետարնե-
րը ընկ. Լենինի ու մեր կուսակցու-
թյան համարեղ ղեկավարությամբ։
Միայն նա, ով գոնե մտքով կպատկե-
րացնե ծանր տանջանքների այն ճա-
նապարհը, վոր անցել ե մեր կուսակ-
ցությունն այդ յերկար տասնամյակ-
ների ընթացքում, միայն նա կարող ե
հասկանալ, թե ինչպիսի մեծ կազմա-
կեր զության ճանապարհն ե բռնել ին-
քը և թե ում դուռն ե բաղխում։

ՄԵՐ ԻՎԱՆԱԿԵՆԵՐ

1917 թ. Հոկտեմբերից սկսած՝ սեր
կուսակցությունը ապրել ե մի կող-
մից հսկայական հաղթանակներ, վո-
րոնց նմանը չեր ունեցել աշխարհի
վոյ և բանվորական կուսակցություն,
մյուս կողմից՝ նույն ժամանակաշրը-
ջանում մեր կուսակցությունը տեսել
ե և դժվարություններ, վորոնց նմա-
նը նույնպես չը գիտե և վոչ մի բան-
վորական կուսակցություն։

Մինչև 1917 թիվը մենք յեղել ենք
աննշան և հալածված կուսակցություն։
Յարդիգմի անկումից հետո՝ շարունա-
կում եյին հալածել մեզ, իսկ 1917 թ.
Հունիսյան որերից հետո՝ ես-երո մեն-
շիկյան կառավարությունը հայտարա-
րեց ընկ. Լենինին գերմանական լր
տես և ընկեր Լենինը ստիպված յե-
ղավ մի քանի շաբաթ պահվել խոտի
դեղի մեջ՝ Սեսարորեցկու մոտակայ-
քում։

Յեզ ահա՝ մեր կուսակցությունը,
վոր բանբասանքի, հալածման ու խա-
չելության եր յենթակա, մի քանի ամ-
սից հետո բարձրացավ ամբողջ իր հա-
սակով և 1917 թվի հոկտեմբերին՝
բանվոր գասակարգին առաջնորդ հան-
գիսանալով՝ մարդոց իր ճանապար
հից բոլոր իր թշնամիներին։ Մեր
կուսակցությունը՝ բանվոր գասա-
կարգի ամբողջական մասնակցու-
թյամբ ու գլուղացիության ը-

գալի մասի ոգնությամբ, իշխանու-
թյունն իր ձեռքը վերցրեց մի լայնա-
ծավալ յերկրում, վոր իր տարածու-
թյամբ բռնում եր ամբողջ յերկրա-
գնդի մեկ վեցերորդական մասը։ Դա
յեղավ չափազանց մեծ հաղթություն,
վորի նմանն աշխարհը յերբեք չեր տե-
սել։

Բացի այդ, կուսակցությունը կա-
րողացավ վերջացնել իմպերիալիստա-
կան պատերազմը, ստեղծել կարմիր
բանակ, ստեղծել նոր բանվորական պե-
տական ապահովատ և բոլոր ֆրոնտնե-
րում հականարգվածել միջազգային բուր-
ժուազիալի հարձակումներին։

Կուսակցությունը կարողացավ հաղ-
թահարել սովի և անտեսական քայլքա-
ման տարիները՝ իր ձեռքից բաց չը
թողնելով դրոշը։ Վերջապես՝ իր տի-
րապետության շրջադարձում կուսակ-
ցությունը տեսավ. վոր Ռուսաստանը
վերականգնման, բարձրացման ու վե-

ըելքի ճանապարհով բարձրանում եւ կուսակցությունը տարավ հանդուգն պարբար և կատարեց հսկայական հաղթանակներ, վորպիսին յերբեկցե կարելի յե պատկերացնել: Բայց նրան չլացրին այդ հաղթանակները: Յերբ 1920 թվին լրացավ Վլադիմիր Իլյիչ ծննդյան 50 ամյակը, Մոսկվայում նըրան բուռն հարգանք մատուցեցին Մոսկայի բանվորությունը և ամբողջ մեր կուսակցությունը, Վլադիմիր Իլյիչն այդ տօնակատարության որը, ի պատասխան այդ հարգանքի, հանդես յեկավ կարձատե ճառով և այդ ճառում նա ասաց հետեւյալը. «Յես խորապես շնորհակալ եմ ձեր բոլոր բարի ցանկությունների համար և կասե. միայն մի բան. յես կցանկանայի, վոր մեր կուսակցությունը չդառնա մեծամիտ կուսակցություն: Այնում ե, վոր յերբ մարդ կյանքում մեծ հաջողություններ և ունենում մեծամանում ե: Դա

կարող ե պատահել և կուսակցության հետ: Զկա - ասում ե Վլադիմիր Իլյիչը, — չկա ավելի խայտառակ և զարհուրելի բան, քան մեծամտացած մարդը, կամ մեծամտացած կուսակցությունը: Յեվ նա նախազգուշացնում եր մեզ, վորպեսզի մենք չդառնանք այնպիսի մի կուսակցություն՝ վոր մեծամտացել ե իր տարած հաղթանակներից:

1003
8313339

ԿԲԸ -

Մեր Առաջարկադիմության ԳՐԱՀԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՎՐԱՀԱՆ

ՎՐԱՀԱՆ ՎՐԱՀԱՆ ՎՐԱՀԱՆ ՎՐԱՀԱՆ

ցությունը տեսել ե նաև հսկայական դժվարություններ։ Քիչ չեն յեղել զեպքեր, յերբ բանվորական մասսաները հեռացել են մեզնից և դա յեղել ե մեր կուսակցության ամենաղժվար ապրումը։

Բուրժուազիայի դեմ ֆրոնտներում պայքարելը, նրա դեմ դիպլոմատիական պայքար տանելը, զանազան լորդ Քերգոնների հետ բանակցություններ վարելը — այս ամենը ի հարկե, չափազանց դժվար ե յեղել մեզ համար, բայց դա մեր կուսակցության մեջ յերբեք առաջ չի բերել առանձնակի դառն տըրամադրություններ։ Ամենազառը ըուպեները յեղել են այն ժամանակ, յերբ մենք զգացել ենք, վոր բանվորական մասսաները մեզ այնքան ել չեն հասկանում, յերբ տեսել ենք, վոր նրանք մեզանից հեռանում են։ Մեղքներս ինչու թագցնենք. յեղել են այնպիսի ժամանակներ, յերբ մեր կուսակցու-

թյունը բանվոր դասակարգի մեջ իրը փոքրամասություն ե մնացել։ Այդպես յեղել ե մասամբ 1914—15 թվականներին, իժպերիալիստական պատերազմի սկզբնական շրջանում։ Այդպես ե յեղել անմիջականորեն փետրվարյան հեղափոխությունից հետո՝ յերբ «պաշտպանողականության» հավերժահիշատակալիքը բարձրացավ բավականի բարձր։

Խոսքը յերգից գուրս չես հանի։ Այդպես ե յեղել մասամբ և 1921 թվին — հիշենք Կոռնշտադի որերը, հիշենք 1918 թվին գործարաններում տիրող տրամադրությունները, յերբ ստիպված յեղանք անցնել չարաբաստիկ մեկ ութերորդական փունտ հացին։

Թարմ ե իմ հ շողության մեջ Որուխովի գործարանի միտինգը՝ Վոլոգարսկու սպանությունը որը, Որուխովսկու գործարանի նման մի գործարանի բանվորության զգալի մասը, յեթե վոչ մեծամասնությունը, այն

ժամանակ մեր դեմ եր: Յեվ դժվար եր այն ժամանակ մեղադրել բանվորներին: Դրությունը չափազանց ծանր եր. յերեխաներին կերակրելու համար բանվորները վոչինչ չեյին գտնում, իսկ զործարանները դադարկվում եյին, սպիտակ գվարդիականները առաջանում եյին, ապրելը ավելի ու ավելի դժվարանում եր. Վոչ բոլորն եյին իրենց հաշիվ տալիս, թե ովքեր են իսկական մեղավորները: Շատերը տատանվեցին: 1920 թվին և 1921 թ. սկզբներին, կրօնշտագի որերի նախորյակին—ահա թե յերբ են յեղել մեր կուսակցության ամենադժվարին որերը՝ և վոչ թե այն ժամանակ, յերբ սպիտակ գվարդիականները մեզ սպառնում եյին, վոչ ել այն ժամանակ, յերբ լորդերը մեզ ուղարկում եյին ուլտիմատումներ: Մեր կուսակցության համար ամենադժվարին տանջանքն այն եր, վոր բանվոր դասակարգը տատանվում

եր, դադարում եր մեզ հավատալուց: Մեր կուսակցիների դրությունը գուծարաններում ու ֆարբիկաններում սոսկալի յեր, հաճախակի նրանց անվանում եյին կոմ-լրտեսներ յեվ նայում եյին կումմունիստների վրա վորպես ատելի պետերի վրա: Յերբ կոմմունիստը մտնում է վորյեվե գործարանի վարպետանոցը՝ անմիջապես դադարում եր բանվորների միջև տեղի ունեցող խոսակցությունը: Պատահում եր, մի բուռն կոմմունիստներ, թվով 30–40 հոգի, ստիպված եյին լինում գործարանների և ֆարբիկանների դռան առաջ հրացանները ձեռքներին կանգնել և թույլ չտալ բանվորներին, վոր ինչպես այն ժամանակ ասում եյին, — «սազաձեն»:

Ահա թե յերբ եր պահանջվում հավատ դեպի գործը: Մինչդեռ այդ մոմենտը հեղափոխության վճռական մոմենտն եր: Յեթե մեր կուսակցու-

թյան մեջ մի փոքրիկ տատանում լիներ՝
կրոնշտագի որերին ամբողջ չեղափո-
խությունը կործանվեր:

Հեղափոխության վիճակը մաղից եր
կախված։ Բանվորությունը սովամահու-
թյան, ցրտահարության ու հուսա-
խորման եր մատնված։ Յուրաքան-
չյուր ամիս նորանոր զորահավաքներ,
նոր նոր դժվարություններ եյին առա-
ջանում։ Գործարանը զործարանի հե-
տեղից փակվում եր. դրամի անկումը
տեղի յեր ունենում չաեսնված արա-
գությամբ, Պետրոգրադին հաց չեր հաս-
ցըվում։ Բոլորն զգում եյին, վոր պայքար
եր մղվում դիմանալու համար։ Յեթե
ուժ լինի կես կամ մեկ տարի յիս դի-
մանալու համար, ապա ամեն բան
հետզհետե կ'կանավորվի, իսկի յեթե
վոչ, այն ժամանակ ամբողջ չեղա-
փոխությունը պարտված կլինի։

Յեկ յեղել ե, յերբ մենք այդպիսի
մոմենտներին փոքրամասնություն ենք

հանդիսացել բանվոր դասակարգի մեջ,
բայց հենց նրանումն ե կայանում ընկ-
կենինի, մեր յերկրի լավագույն բան-
վորության հետ միասին ստեղծած
կուսակցության մեծությունը, վոր նա
նման ըոպեներին շարունակում եր
անսասան մնալ:

Մեր կուսակցությունն ապացուցեց,
վոր նա կարողանում եր կանգուն մը-
նալ վոչ միայն տոնական որերին այլ և
չեղափոխության նվաճումների համար
մղվող գորշ ու առորյա պայքարում։
Կուսակցությունն իր հզորությունն ա-
պացուցեց նրանով, վոր յերբ բանվոր
դասակարգի ձայնը կարվում եր, յերբ-
բանվոր դասակարգը հուսալքված եր ու
քիչ եր մնում, վոր ինքն իր ձեռով իր
վզին փաթաթեր կախաղանի ողակը
կուսակցությունը՝ բանվոր դասակարգի
մեջ փոքրամասնություն լինելով հան-
գերձ՝ կարողացավ ստիպել, մինչև իսկ
այն տեղ, վորտեղ հարկավոր եր զեն-

քի դիմել — վոր բանվորությունը չցրվի,
չդառնա մարդկային փոշի, այլ իր կուռ
շարքերը պաշտպանի այդ անցողիկ շըր-
ջանում, վոր վորոշում եր ամբողջ Հե-
ղափոխության բախտը:

Յերբ այդ ծանր գրությունը վրա հա-
սավ, կուսակցության շարքերը սկսե-
ցին նոսրանալ, նրա մեջ մնացին ամե-
նակոփածները, վորոնց կես մասը գլու-
նը վում եր ֆրոնտներում: Մնացածները
ամեն ջանք թափում եյին՝ համոզելու
համար անկուսակցական բանվորությա-
նը, վոր նա վորևէ կերպ հաղթահա-
րե այդ ամենամեծ դժվարությունները:
Յերբեմն ստիպված ելինք լինում նույ-
նիսկ հալածանքի դիմելու՝ բռնություն
գործադրելով մինչև անգամ գործադրու
անող բանվորների հանդեպ: Դա մեզ
համար ամեն ինչից ծանր եր, բայց
մենք գիտեյինք՝ վոր յեթե քայլայմանը
հնարավորություն տալինք՝ Հեղափո-
խությունը կկործանվեր:

1921 թվի գարնանը, յերբ Վասիլե-
սկու կղզում, Լենինգրադի մոտ, կին բան-
վորուհիները դուրս յեկան փողոց՝ պա-
հանջելով հաց և մեր ուսանող կոմմու-
նարները պիտի ցըեյին ու կանգնեցնե-
յին նրանց՝ դա անյերեակայելի ցակ
եր պատճառում մեզ բոլորիս և գըլ-
խավորապես Վլադիմիր Իլիչին, վոր
իրեն զգում եր բանվոր դասակարգի
շարքերից դուրս յեկած և սիրում եր
վոչ միայն բանվոր դասակարգն ամբող-
ջապես, այլ և ամեն մի բանվորուհուն,
ամեն մի բանվորին առանձին: Յեվ բան-
վոր կոմմունարները, վորոնք այն ժամա-
նակ ծառայում եյին Կարմիր բանակում,
կամ աշխատում եյին մեր այլ հիմնարկ-
ներում, և վորոնք ստիպված եյին ճըն-
շումների դիմելու՝ ծանր տանջանքներ
եյին ապրում. բայց նրանք գիտեյին,
վոր այլ կերպ հեղափոխությունը փըր-
կելն անհնարին եւ: Այդ ծանր ժամա-
նակները բանվորության մի մասը հե-

ուսնում եր մեզանից, տատանվում եր,
չեր հավատում հեղափոխության բարե-
հաջող յելքին, մտածում եր՝ վոր բուր-
ժուազիան մեզ վերջի վերջո կկոտորի
և բանվորության մի մասը չեր ցանկա-
նում մեզ հետ միասին մասնակից լի-
նել այդ վիճակին։ Այդ տարիների ըն-
թացքում բանվոր դասակարգի և ամ-
բողջ Հեղափոխության ապրած վիճակի
բոլոր այլանդակությունները միշտ ել
անդրադարձել են մեր կուսակցության
վիճակի վրա՝ այն պարզ պատճառով,
վոր մեր կուսակցությունը բանվոր դա-
սակարգի միս ու արյունից ե կազմված։

II ՆՈՐ ՇՐՋԱՆԻ ՍԿԻԶԲԸ ՄԵՐ ԿՈՒՍԱԿ- ՑՈՒԹՅԱՆ ՄԵԶ

Բանվորներ հոսանք գեպի մեր
կուսակցությունը

Այժմ վերջապես զալիս են այ ժա-
մանակներ, յերբ բանվոր դասակարգի
ամբողջ մասսան տեսնում է կամ գոնե
սկսում ե տեսնել մեր գործի ձշմար-
տությունը, սկսում ե համոզվել, վոր
վոչ մի այլ ճանապարհ չկար և չեր
ել կարող լինել, վոր Ռուսաստանի կոմ-
մունիստական կուսակցությունը միակ
կազմակերպությունն է, վոր կարողա-
ցել ե դեպի նոր ճանապարհ դուրս բե-
րել բանվոր դասակարգին՝ նրա միջո-
ցով և գլուղացիությանը, իսկ գյուղա-
ցիության միջոցով նաև ամբողջ յեր-
կիրը։

Դրանով ե բացատրվում այն, վոր վերջին տարում բանվորների նոր հոսանք ե սկսվել դեպի մեր կուսակցության շարքերը։ Այդ հոսանքը սկսեց դեռ մինչև Վլադիմիր Իլյիչի մահը։ Մեր կուսակցության համամիութենական կոնֆերանսը, վոր իր աշխատանքներն ավարտել ե մինչև Վլադիմիր Իլյիչի մահը՝ մի վորոշում ընդունեց, այն մասին, թե դազգահի մոտ աշխատող հարցուր հազար բանվորներ պետք ե ընդունվեն կուսակցության մեջ։ Լենինգրադի առանձին կազմակերպություններում բանվորների ու բանվորուհիների հոսանքը դեպի կուսակցությունը սկսվել եր մինչև Վլադիմիր Իլյիչի մահը։ Վլադիմիր Իլյիչի մահը միայն ափելացրեց այդ հոսանքը—նոր խթան հանդիսացավ, արթնացրեց քնածների և տառանվողների վորոշ շերտեր և այն նըշանակությունն ունեցավ, վոր այդ շերտերն ավելի մտերմաբար յեկան մեղ

մոտ։ Այն, ընկ. Լենինի մահը ստիպեց մտածել յուրաքանչյուր բանվորի ու բանվորուհու և մեզ բոլորիս։

Ամբողջ Ռուսաստանն իրեն վորբացած զգաց։ Մինչև Ընկ. Լենինի մահը մի Ռուսաստան կար յեկ Ռուսաստանը ուրիշ դարձավ նրա մահվանից հետո։ Յուրաքանչյուր մարդ խորը մտածեց իր հայրենի յերկրի հետագա վիճակի մասին։ Բայց այդ ալիքը, վոր ուղղվեց հիմա դեպի մեր կուսակցությունը՝ նախապատրաստված եր առաջուց։

Կուսակցությունն այժմ նոր անդամների բերք ե հնաձում նրա համար, վոր նրա հերոսական աշխատանքը՝ չնայած այդ տարիներում կատարած առանձին սխալներին, պատրաստել ե այդ հունձը։ Մենք միշտ գիտելինք, վոր բանվոր դասակարգի ճանապարհը ծածկը-ված ե վոչ թե վարդերով, այլ գշերով։ Այսոր մակընթացություն, վաղը տեղա-

տփություն, մյուս որը նոր մակրնթացություն և այն: Կուսակցության ուժը կայանում է նրանում, վոր նա տեղատվության տարիներումն ել ամուր եր կանգնած իր դիրքերում:

Բայց այն, ինչ մենք տեսնում ենք այժմ՝ դա Հեղափոխության վորոշ հաշվեհարդարն եւ Բանվորների մասսայական մուտքը դեպի մեր կուսակցությունը, յեղափակում ե մեր հեղափոխության պատմության մի ամբողջ դրույթը:

Կուսակցությունը յեվ բանվոր զասակարգի մեծամասնությունը

Մինչև 1917 թվի Հեղափոխությունը յեղել են տարիներ, յերբ համարյա թե ամբողջ մեր կուսակցությունը նստած եր բանտում: Մեր կազմակերպությունն ել անխնա ջարդում ելին, բայց այնուամենայնիվ մենք հավատում ենք մեր գործին և զիտեցնք, վոր կգան ավելի լավ ժամանակներ: Կոմմունիստական

կուսակցությունը չեր կարող բանվոր դասակարգի մեծամասնությունը միացնել իր շարքերին՝ քանի դեռ բուրժուազիան եր կանգնած իշխանության գրլուխ: Լավագույն դեպքում բանվոր դասակարգի մեծամասնության վրա նա կարող ե ազդեցություն ունենալ: Բուրժուազիան վոչ մի դեպքում չի թողնում կոմմունիստներին, վոր զարգանան ու դառնան մեծ և լեզար կոմմունիստական կուսակցություն:

Նա ջախջախում ե կոմմունիստներին, կոմմունիստական կուսակցությունը հայտարարում ե անլեզար և կոմմունիստակցության պատկանողներին արտաքսում ե, կախաղան ե հանուժ, մասսայական արյունահոսություններ ե սարքում՝ ինչպես դա տեղի ունեցավ Գերմանիայում, յերբ գնդակահարվեցին հազարավոր ապստամբ բանվորներ, յերբ սպանիցին կրկնեխտը և Ռոզա Լյուկսեմբուրգը: Այսպես ե վերաբերվում

բուրժուազիան ամբողջ աշխարհում։
Բուրժուազիան այնքան հիմար չե։ Նա
չի սպասի, վոր բանվորության մեծա-
մասնությունը միանա կոմմունիստա-
կան կուսակցության շարքերում և ապա
հարձակում գործե կապիտալիզմի դեմ։
Բուրժուազիան հենց վոր տեսնում ե,
թե կոմմունիստական կուսակցությու-
նը սկսում ե աճել, հրով ու սրով աշ-
խատում ե ե վերջ տալ նրան։ Բացի
բանտերից, կախաղաններից, աքսորնե-
րից, բուրժուազիայի տրամադրության
տակ կան նաև լրագրեր, դպրոց, պար-
լամենտ, լեկեղեցի և մասսաների վրա
ազգելու այլ միջոցներ։ Հենց այդ ե
պատճառը, վոր քանի իշխանության գը-
լուխը կանգնած ե բուրժուազիան՝ կոմ-
մունիստներն իրենց շարքերում չեն կա-
րող միացնել բանվորության մեծամաս-
նությունը։ Նրանք ստիպված են միաց-
նել միմիայն մի բուռն, միայն ավան-
գարդը, վոր չի վախենում վոչ մի հա-

լածանքից։ Բայց անդամ այն դեպքում,
յերբ կոմմունիստները գրավում են իշ-
խանությունը, ինչպես ցուց տվեց մեր
փորձը, անցնում ե ևս մի քանի տարի,
վորի ընթացքում կոմմունիստները
նույնպես չեն կարողանում իրենց շար-
քերի մեջ քաշել բանվորության մեծա-
մասնությունը։ 1917 թվի հոկտեմբերին
մենք ստացանք իշխանությունը, բայց
մինչև այժմ ել դեռ բանվորների մե-
ծամասնությունը մեր կուսակցության
անդամ չե և, վորքան կարելի յե նա-
խատեսնել՝ մոտավորապես խորհրդակին
իշխանության գոյության տասնամյակին
միայն մենք կունենանք բանվորության
մեծամասնությունը՝ կազմակերպված
մեր կուսակցության շարքերում։

Այլ խոսքերով, մեր հեղափոխու-
թյան փորձը ցուց ե տալիս, վոր իշ-
խանությունը գրավելուց հետո, մոտ
10 տարի յե հարկավոր, վորպեսզի բան-
վորության մեծամասնությունը մտնի

կոմմունիստական կուսակցության շարքերը:

Ինչու յե այդ այդպես վորովհետեւ հեղափոխությունը տոնակատարություն չե, այլ ծանր պայքար ե և նա չի վորոշվում մի վալրկյանում, բարիկադների վրա, հին կառավարության անկումով և ձմեռային պալատի գրավումով։ Վահական միայն սկիզբն եր։ Այնուհետեւ պետք եր կառուցել կարմիր բանակը։ Բանեցնել գործարանները, կանոնավորել դպրոցները, հիվանդանոցները, յերկաթուղու գծերը և այլն, և այդ բոլորի համար պետք են տարիներ ու տարիներ։ Իսկ ժամանակական բանվորը՝ մինչեւ իր սեփական աշքերով չտեսնե զործի հաջողությունը, մինչեւ չտեսնե զործն առաջ ե գնում, նա կմնա մի կողմը կանգնած և կըսպասի, թե ինչ ե լինելու։

Յերբ այդ անցողական տասնամյակը կանցնի, յերբ բանվորության մե-

ծամասնությունը կազմակերպված կինի Ռուսաստանի կոմմունիստական կուսակցության շարքերում, այն ժամանակ գործը կշարժվի միանգամբ, ավելի մեծ արագությամբ, քան մինչ այժմ վորովհետեւ այն ժամանակ հըգոր բանվոր դասակարգը՝ ամբողջովին միացած կուսակցության շրջանակում, ունենալով հսկայական կուտակված փորձ, իրենից մի այնպիսի մեծ ուժ կներկայացնի, վորի գեմ վոչինչ և վոչ վոք չի համարձակվի դուրս գալ։

Ս. Եկուսակցականության մասին

Ներկա մոմենտի կարևորությունը կայ անում ե նրանում, վոր մենք տեսնում ենք այդ նոր հսկայական շրջանի սկիզբը։ Մենք այժմ հաճախակի հարցընում ենք մեկս մյուսին և յուրաքանչյուր ընկերոջը, վոր մտնում ե կուսակցության մեջ, թե ինչով ե բացատրվում այն, վոր նա մտնում ե կուսակցության մեջ։ Յեվ սկսվում ե բացա-

տրությունը. այն «պատճառով, վոր Վլադիմիր Իլյիչը մահացել ե» ասում ե մեկը. յերկրորդն ասում է. «Նայած գոնում եյի, վոր մտնելը ահճրաժեշտ ե, այսուամենայնիվ առաջ ընտանեկան դրությունս խանգարում եր: Այժմ վոչինչ, դրությունը հեշտացել ե,» և այն, և ալին, Յեզիկ կոաժամանակ, և այդ ժամանակը հեռու չե, նա կլինի 5 տարուց հետո, յերբ գործարաններում զարմանքով կնայեն նըրա վրա, ով չի մտել կուսակցության մեջ: Այդպիսի բանվորներին կհարցնեն՝ այդ ինչպես ե յեղել, ինչու դու կուսակցության մեջ չես:

Կար ժամանակ, յերբ գործարանում անկուսակցական լինելը համարվում եր բարիք: Դուք ինքներդ հիշում եք այն ժամանակները, յերբ մի քանի բանվորներ հալարտանում եյին՝ առելով «մենք ինչ վոր կոմմունիստներ չենք, մենք անկուսակցականներ ենք» և ինք-

նաբավականությամբ շփում եյին իրենց միբուքները. իոկ մենք «ինաւմում» եյինք այդ անկուսակցականներին և նրանցից մի քանիին այդ խընամքը հաճույքով եյին ընդունում: Յես կարծում եմ, վոր այժմ գործարաններում հոգեբանությունը սկսում ե փոխվել: Վազ վոք գոռողությամբ չի հայտարարի այն մասին, վոր ինքն անկուսակցական ե: Յեզի ինչ հալարտանալու բան և այդ: Զե վոր անկուսակցականը դա մի մարդ ե, վոր չի պատկանում վոչ մի վորոշ կուսակցության, այսինքն՝ չունի վորոշ ծրագիր, չզիտե ինքն ինչ և ուզում քաղաքական կյանքից և դատում ե այնպես, ինչպես հաճախակի հանաքով ասում եր ընկ. Լենինը, — «մեր գյուղացիներից շատերը, և մի քանի բանվորներ դատում են այսպես ամեն վոք իւս համար և միայն ասաված ըսլորի համար»: Ահա այսպես ե դատում անկուսակցա-

կամը։ Նա չգիտե, թե ինչ ե ուզում։ Առանց ծրագրի, առանց վորոշ գաղափարների, առանց կամքի ու առանց կազմակերպության՝ նա մարդկային փոշի յե։ Հպարտանալու վոչինչ չկա այստեղ, և յես մի դառն ըռպեցին, 1919 թվին, մի ժողովուն անկուսակցականներին ասացի՝ «ինչ եք պարծենում. անկուսակցականները՝ դրանք գըլւուխներից զուրկ են. անկուսակցականները չգիտեն, թե ուր պետք ե դնալ և ուրիշներին դեպի ուր պետք ե տանել։ Ի հարկե, ձեզանից վոչ վոր անկուսակցականների հետ իր կապը չպետք իսգե։ Բայց անկուսակցականության դեմ պետք ե պայքարել, Այս պատճառով մենք պետք ե գործարաններում այժմ համբերությամբ ու տոկունությամբ բացատրենք, վոր գիտակից բանվորը անկուսակցական չպետք ե լինի։ Թողնենք, վոր բուրժուազիան և նեպմանները լինեն անկուսակցական։

Արևմուտքում բուրժուազիան ամենուրեք կազմակերպված ե իր կուսակցությունների մեջ, իսկ բանվորին քարոզում ե անկուսակցականություն, ասելով՝ վոր քաղաքականությունը ձեր խելքի գործը չե։ Իսկ յես կարծում եմ, վոր մեր բանվորագյուղացիական պետության մեջ, պետք ե դերերը փոխել։ Մենք նեպմաններին խորհուրդ կտանք, վոր նրանք լինեն անկուսակցական, իսկ ինքներս կամրապնդենք մեր բանվորական կուսակցությունը։ Յես կարծում եմ, վոր բանվոր դասակարգի կանանց մեջ, ծերուկ բանվորների մեջ, վորոնք դեռ հպարտանում են իրենց անկուսակցականությամբ՝ այժմ պետք ե տանել աշխատանք, բացատրելով նրանց, վոր անկուսակցականությամբ հպարտանալու կարիք չկա։ Սպասում եյինք ձեզ ընկ. անկուսակցականներ, մի տարի, յերկու տարի, յերեք տարի, վերջապես վրա հասավ յոթերորդ

տարին. ժամանակ ե վերջապես պատիվ իմանալ, ժամանակ ե վերջապես ուղեղներդ շարժելու:

Այսպիսով՝ այն, ինչ վոր կատարվում ե մեր աչքերի առաջ՝ դա հարյուր հազար նոր անդամների հասարակ ընդունելություն չե, կուսակցության մեջ այն իմաստով, վոր յեղել ե չորս հարյուր հազար անդամ, այժմ կը մինի հինգ հարյուր հազար: Վոչ. դա նշանակում ե, վոր սկսվել ե մեծ թեքում բանվ ը դասակարգի մեջ. բանվոր դասակարգն զգաց, թե ինքը պետք ե կազմակերպված լինի այն կուսակցության շարքերում, վոր քսան և հինգ տարի պարփարել ե բանվորության շահերի համար. վոր կարողացել ե հաղթանակել և հաստատել բանվորազյուղացիական իշխանություն, կառուցել էարմիր բանակ, հարվածել թշնամիներին, վորոնք չորս կողմից սպառնում ելին և վերջապես անցնել տնտեսու-

թյան բարձրացման գործին: Այդ թեքումը զեռ մի քանի տարի առաջ նախատեմում եր Վլադիմիր իլյիչը: Կուսակցությունը նույնպես նախատեսնում եր այդ մենք զբան սպառում ելինք. կարելի յե ասել, բոլորս աչքները հառած սպասում ելինք, թե յերբ պետք ե մատսավիկ բանվորը մտնի կուսակցության մեջ և տեսնե, վոր իրեն առաջ իսկապես սկիզբն ե առնում նոր թուսատանը:

Այժմ վերջապես մենք հասանք այդ որին, մենք տեսնում ենք բանվորական նոր բանակի վեր բարձրացող առաջին շարքերը:

Մեծ մարդու մահը, վոր մեզնից յուրաքանչյուրը վերհիշում ե որական տասանգամ, դրզեց միւն, արագացրեց միւն այն, ինչ տուանց այդ ել հասունանում եր շատերի սրտերում և ուղեղներում: Մեր կուսակցությունն ավելի ևս կմեծանա և իրոք անհաղթ կը

դառնա այն ժամանակ, յերբ նրա մեջ
կցվի անբողջ բանվոր դասակարգը:

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԿՈՉԸ ՅԵՎ ՄԵՐ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ուսմունք յեվ աշխատանք

Ի՞նչպիսի խնդիրներ են դրված ձեր
առաջ, մեր առաջ, ամբողջ կուսակցու-
թյան առաջ: Այժմ մեր պատմության
նոր դարագլխի սկիզբն ե: Այժմ ի՞նչ
պետք ե անեք դուք—կուսակցության
նոր անդամներիդ հսկայական մասսան:
Այդյոք դուք առաջ պետք ե սովորեք
և հետո զբաղվեք պետական գործերով,
թե՛ ընդհակառակը: Այստեղ հանդես են
գալիս մի շարք լուրջ հարցեր:

Ի հարկե, նախ և առաջ անհրաժեշտ
ե սովորել: Մոսկվայում առաջ են յե-
կել լենինիզմի ուսումնասիրման հազա-
րավոր խմբակներ, ընկ. Լենինի կյան-
քի, աշխատանքի ու նրա գաղափար-
ների ուսումնասիրության, այսինքն

միաժամանակ մեր կուսակցության
կյանքի աշխատանքի և ուսմունքի ու-
սումնասիրության խմբակներ—վորով-
հետեւ մեր կուսակցությունն առանց
լենինի չի կարելի պատկերացնել՝ այն-
պես, ինչպես լենինին չի կարելի պատ-
կերացնել առանց մեր կուսակցության:
Լենինը լենին չեր լինի, յեթե նա չը
լիներ կուսակցության մեջ, յեթե նա
լիներ մեն մենակ, յենթադրենք հենց
գիտնական՝ նստած իր առանձնասեն-
յակում: Լենինը դարձավ աշխատավո-
րության առաջնորդը, սոցիալիզմի մար
դարեն, միլիոն ու միլիոն մարդկանց
առաջնորդն այն պատճառով, վոր նա
կուսակցության անդամ եր, վոր նա
առաջավոր բանվորության հետ միա-
սին շնչում եր միենույն կրծքով: Կա-
րելի՞ յե արդյոք պատկերացնել լենի-
նին և կարլ լիբկնեխտին վորպես ան-
կուսակցականների: Ի հարկե, վոչ:

Նըանք այդ գեպքում չելին կարող

լինել վոչ լենին և վոչ ել լիբկնեխտ:
Նրանք այդ ժամանակ ել կարող ելին
լինել մեծ մարդիկ, մեծ ուսումնական-
ներ, ինչպես որինակ թարվինը, բայց
նրանք չեյին կարող լինել միլիոն ու
միլիոն աշխատավորության առաջնորդ-
ներ: Ուրեմն՝ առաջին ինդիքը, վոր
մենք պետք ե կատարենք, դա մեր
կազմակերպությունը վաղիմիր իլլի-
չի և կուսակցության կյանքը, նրանց
աշխատանքն ուսումնասիրող գպրոցնե-
րի ցանցով ծածկելն ե:

Բայց սխալ կլիներ, յեթե յենթա-
դրեյինք, վոր մարդիկ առաջ պետք ե
ավարտեն դպրոցները և համալսարան-
ները, և հետո միայն աշխատանքի ձեռ-
նարկեն: Մեզ մոտ այսպես լինել չի
կարող: Մեզ մոտ համալսարանները չեն
բավականացնի և վերջապես բանվոր-
ները իրենք չեն համբերի, վոր միքա-
նի տարիներ նստեն համալսարանի
նստարանների վրա՝ առանց կենդանի

գործի: Մենք պետք ե այդ բոլորը մի-
ացնենք. մենք պետք ե կարողանանք
ուսումնամը դասավորել այնպես, վոր նա
գործնական աշխատանքի հետ մի հու-
նով ընթանա և մենք կարծում ենք,
վոր այդ մեզ կհաջողվի:

Պետք ե ձեռնարկենք կուսակցու-
թյան պատմության ուսումնասիրու-
թյանը, քաղգրագիտության ու մարք-
սիզմի գպրոցներն անցնելուն, բայց մի-
աժամանակ չպետք ե հետաձգել և ա-
ռորյա աշխատանքը. Կուսակցության
լուրաքանչյուր նոր անդամին պետք ե
աշխատանք տալ ըստ իր ընդունակու-
թյունների և հակումների: Կուսակցու-
թյան նոր անդամներն աշխատանքի ըն-
թացքում պետք ե սովորեն՝ վոմանք
արհեստակցական կողմակերպություն-
ներում, վոմանք զուտ կուսակցական
և խորհրդարին աշխատանքների ասպա-
րիզում: Աշխատանքներն անսահման
են: Մենք գիտենք, վոր նոր անդամ-

ների մեջ քիչ չեն այնպիսիները, վորոնք բանվորական շարժման մեջ գործնական մասնակցություն են ունեցել ընտրովի պաշտոններում — յեղել են արհմիության լիազորներ, գործարանային կոմիտեյի անդամներ, բանվորուհիների պատգամավորուհիներ, գնահատող հանձնաժողովների անդամներ, բնակարանային վարչությունների անդամներ, ժողովրդական առենակալներ, կոռուպտացիայի աշխատակիցներ, և այն և այլն, և այլն։

Ի հարկե, կան և այն պիտիները, վորոնք մասնակցություն չեն ունեցել վոչ մի հասարակական աշխատանքում։ Ցածի խավին ամենից ավելի մոտ կանգնած մեր կազմակերպիչների ամենահիմնական ընդունակությունը պետք է կայանա նրանում, վոր նրանք կարողանան յուրաքանչյուրին աշխատանք տան ըստ նրանց լնդունակությունների, և հետո՝ հետզհետե աշխի լնկնող-

ներին առաջ քաշեն ավելի մեծ աշխատանքի համար։

Մարդիկ մեզ մոտ աշխատանքին վարժվում են ամենից առաջ իրենց գործարաններում և Փաքրիկաններում։ Մենք արդեն սկսել ենք կոմմունիստների արտադրողական խորհրդակցություններ կազմակերպել — նախ ըստ ձեռնարկությունների և ապա ըստ տըրեստների։ Դրանք հանդիսանալու յեն վոչ թե միտինգներ, այլ գործնական փոքրիկ խորհրդակցություններ, փորոնք հսկայական ոգուտ կբերեն։ Պետք ետենանել մեր գործարանների տնտեսությունները, արհեստանոցները վերից վար՝ ուղիղ և արդյոք պատվերների բաշխումը, պատվերները կատարված են, լավ հիմքերի վրա գրված և արդյոք վառելիքի, հում նյութի գործը, իր տեղումն և արդյոք արհեստավորը, կառուցողը և այլն։

Պետք ե խորասուզվել այդ բոլոր

ծանր հարցերի մեջ, վորպեսզի գործն առաջ տարվի: Նախ և առաջ հարկավոր ե բարձրացնել մեր արտադրությունը, վորովհետև մեր ապագան գործարաններում ու ֆաբրիկաներումն ե:

Մեր կուսակցության անդամները չպետք ե կտրվեն արտադրությունից: Ի՞նչպես եր զրված մեզ մոտ գործը առաջ—մինչ հեղափոխությունը: Բանվորն աշխատում եր գործարանում 10—12 ժամ, իսկ հետո վագում եր հավաքույթի վայրը կամ տարածում եր թերթիկներ, կամ զնում եր խմբակ՝ պատրաստվելու: Մենք կարծում ենք, վորայիժմ կրկին պետք ե սովորությունն դարձնել գործարանային աշխատանքը հասարակական աշխատանքի հետ միացնել: Մեզ մոտ այժմ գործարաններում աշխատում են վոչ թե 12 ժամ այլ 8 ժամ: Աշխատանքի պայմանները դառնում են քիչ թե շատ նորմալ: Այժմ չկա այն, ինչ կար 1920 թվին, յերբ

մի շարք կումունիստներ շաբաթորյակների ժամանակակից կամացնակ պատուաված կոշիկներով, կիսաքաղց, իրենց վերջին ուժերըն եյին սպառում, աշխատում եյին՝ մինչև ուշագնացությունը: Դրությունը՝ հետզհետե լավանում ե և մենք պետք ե ընկերներին սովորեցնենք, վոր նրանք գործարանային 8 ժամյա աշխատանքներից հետո՝ մեկ կամ յերկու ժամ աշխատեն Արհմիություններում, կուսակցության մեջ, խորհուրդներում և այլ տեղեր: Իհարկե, մեզ մոտ կինեն և այնպիսիները, վոր ամբողջովին կը կլանվեն կազմակերպչական և կուսակցական այլ աշխատանքներով: Բայց մենք պետք ե աշխատենք, վոր այդ բանվորների մեծամասնությունը մնա արտադրության աշխատանքի ասպարեզում:

Հանդես ե բերված նաև մի ուրիշ շատ լավ գաղափար, վոր ասում ե, թե մեր գործարաններում պետք ե

բարելավենք աշխատանքի պայմանները։ Մոսկայում կազմված ե Աշխատանքի կենտրոնական ինստիտուտ, վոր ձըգտում ե կատարելագործել մեր ձեռնարկություններում տարվող աշխատանքները։ Նա սկսում ե փոքրից։ Ի հարկե, մենք չենք կարող անմիջապես ձեռնարկել շատ մեծ խնդիրների կատարման, բայց մի վորեե բան կարելի յե անել։ Այսպես, որինակ, պետք ե աշխատել, գոնե սկզբնական շրջանում՝ վոր գործիքը դազգահի մոտ դասավորված լինի կանոնավոր, վոր մեքենան մաքրվի ժամանակին, վոր վարպետի ոգնականը և կառուցողը լինեն իրենց տեղում—սա ևս մի աշխատանք ե մեր կուսակցության նոր անդամների համար։ Մեր կուսակցության մեջ մտել են լավագույն վորակալ բանվորները, գործարանի լավագույն սամագետները, վորոնց ձեռքին աշխատանքը վառվը ուում ե, վորոնք ստեղծեցին մեր գոր-

ծարանները և Գաբրիկանները։ Պետք ե ավելի խորը թափանցել և լավ ջոկել պերսոնալը, այսինքն այն անձնական կազմը, վոր հարկ ովոր ե գործարանի աշխատանքի կանոնավոր կազմակերպման համար։ Մենք այժմ առաջին անգամ կունենանք մարդկանց այնպիսի մի խումբ, վորոնք նայում են գործարանի վրա վոչ թե վարձու բանվորի աչքով, այլ վորոնք գիտեն, թե գործարանը մերն ե, թե իրենք աշխատում են բանվորագլուղացիական կառավարության համար։

Արեհետակցական միությունները

Շատ աշխատանք կա և Արհմիություններում։ Նրանք դեռ հիվանդութեն, նրանց մեջ կյանքը քիչ ե, նրանց պետք ե արթնացնել, վերկացնել, կենդանացնել, շարժել, վորպեսզի նրանց կյանքը լինա, վորպեսզի նրանց միջոցով վեր կենան և ընդհանուր աշխատանքի դիմեն տամնակ ու հարցուրավոր նոր բանվորներ։

Կոռպերատիվներ

Կոռպերատիվներ նույնպես մեզ մոտ կաղում են: Այստեղ պետք է գործադրել մեծ յեռանդ: Շատ կոռպերատիվներում, ապրանքներն ավելի թանգ են, քան շուկայում: Կուսակցության նոր անդամներն իրենց միջից պետք և առաջ քաշեն լավագույն, գործնական, ազնիվ, առողջ դատող ու զրագետ մարդկանց և նրանց պետք է ուղարկեն կոռպերատիվները: Թող նրանք ըստուգեն ամրող գործը, նվազեցնեն վերադիրները, վոչնչացնեն կաշառակերությունը, գողությունը, մի խոռովով, թող կոռպերատիվներն իրենց ձեռքով վերցնեն:

Միթե սա մեծ գործ չէ: Միթե ընկեր լենինը չեր գրել, վոր յեթե քաղաքներում ու գյուղերում կոռպերատիվներն ուղիղ հիմքերի վրա դնենք՝ ապա դրանով մեր կյանքում կտտեղձենք սոցիալիզմի մի կոր, և ան ժամանակ:

Նակ մենք կկարողանանք վտարել նեպմտներին, առեւրականներին և սպեկուլարներին:

Կուլտուր—Լուսավորչական աժխատահերթներ

Շատ բացեր կան նաև կուլտուր-լուսավորչական աշխատանքների ասպարեզում: Վորոշ բան մենք ալ զեն անում ենք: Բայց դա գեռ մի կաթիլ և ծովի մեջ: Մենք պետք եւ այնպես աշխատենք, վոր մեզ մոտ չմնա վոչ մի անգրագետ, վոչ մի բանվոր, վորը չգիտենա կուսակցության պատմությունը: Այդ աշխատանքի համար ես մանք պետք եւ առաջ քաշենք նոր մարդկանց:

Մեզ հարկավոր են տերի կառավարիչ բանվորներ յեզ գատավորներ

Հետո, մեզ անհրաժեշտ են լավ, ազնիվ, գիտակից կառավարիչներ: Լենինգրադում այժմ կա ուրվում են ըընակարանային ընկերությունների վե-

թլնտրություններ, բնակարանային ընկերությունների մեջ մենք արդեն անցենք կացել 4.500 բանվորներ – այս ելքաղաքի ամենահարուստ շրջաններում, վորածեղ մենք բուրժուազիային նեղում ենք։ Մի ժողովում, Պետրովրադի մի բանվոր հայտնեց մեզ, վոր ինքը հանդիսանում ե մի մեծ, հարուստ տան կառավարիչ, վոր ինքը տան վարչությունից գուրս ե հանել խոշոր բուրժուական մի ինտելիգենտի և այժմ բանվորների ոգինությամբ հրաշալի կերպով կատարում ե ամբողջ աշխատանքը, վերանորոգում ե տունը և այլն։ Ահա այս տեղ ել աշխատանքն անսահման ե։

Մեզ հարկավոր են և գնահատու հանձնաժողովների աշխատակիցներ, վարպետներ, կառուցողներ։ Մենք ժողովրդական դատարաններից պետք ե վրտարենք կաշառակերությունը, մենք պետք ե դուրս հանենք ժողովատարաններից անպատճառի մարդկանց, վո-

րոնք անընդունակ են դատական գործի համար։ Զե՞ վոր դատարանը լավ հիմքերի վրա գնելը մեր յերկրում չափազանց մեծ գործ ե։ Հարկավոր ե, վոր լավ ժողովատենակալներ առաջ քաշենք ժողովատարաններում, վորպես զի դատարանը հասցնենք հարկ յեվածքարձրության։

Դ պ ր ո ց ք

Մենք ունենք դպրոցական կոմիտեներ, վորոնք սկսել են ոգնել դպրոցական գործին. այդ գործը նոր ե սկսաված։ Հարկավոր ե, վոր մեր դպրոցին մոտենանք անսպես, ինչպես հարկն ե, վորպեսզի այնտեղ ցուրտ չինի, վորպեսզի դպրոցը մաքուր լինի։ Կուսակցության յուրաքանչյուր անդամը պետք ե ոգնի, վոր իրենց կոչման բարձրության վրա կանգնեն պրոլետարական դպրոցները, հիվանդանոցները, և մանկատները։

Նոր տաղանդները յեվ նրանց գործադրումք:

Ի հարկ ե, կուսակցության նոր անդամների շարքերից առաջ կդան յեվ այնպիսիները, վորոնք կղեկավարեն ամբողջ տրեսաները յեվ կիմեն Գործկոմների նախագահներ, ամբողջ նահանգի ղեկավարներ: Վորտեղ պետք ե փնտրենք կայծ ու տաղանդ ունեցող նոր մարդկանց՝ յեթե վոչ ֆաբրիկաներում ու գործարաններում, բանվոր դասակարգի լավագույն ներկայացուցիչների մեջ: Յեվ մեր կազմակերպիչների ամենազլավոր խնդիրը կալանում է նրանում, վոր կայծ ու տաղանդ ունեցող մարդկանց ոգնեն՝ նրանց ընդունակությունները աշխատանքի դնելու գործում: Մեր գործն անսահման ե, բայց գործ անողները քիչ են: Պետք ե գործ անողներին փնտռել յեվ դանել կարողանալ: Այսպիսով սովորելու գործը պետք ե միաժամանակ ընթանալ ընկերներին աշխատանքի քաշելու գոր-

ծին գուգահեռ: Վորովհետեւ միմիայն ժողովրդի ցածր խավերից կարող են առաջ գալ այն շինարարները, վորոնք կշարունակեն Վագդիովիր իլիշի սկսած մեծ գործը:

Մինչև այժմ մենք պաշտպանվում ենք թշնամիներից, վորոնք հարձակվում յեխն մեզ վրա ամեն կողմից յեվ հիմա միայն մենք հնարավորություն ունենք իսկապես դիմելու Հոկաեմբերյան հեղափոխության ծրագրի կիրառմանը: Յեվ մեր յուրաքանչյուր գավառում ու յուրաքանչյուր շրջանում աշխատանքն անսահման է: Վոր կողմը նայե՞ա ամեն տեղ կտեսնես, վոր մենք մեծ շինարարության սկզբին ենք միայն: Այդ հարյուր—հարյուրիսուն հազար նոր անդամները, վորոնք հոսել են այժմ մեր կուսակցության մեջ՝ տալիս են մեզ կապ գուղղացիության հետ կամ կապ մասսայի հետ ընդհանրապես, վորովհետեւ նրանք առաջ են յեկել ժո-

ղովրդի խիտ շարքերից յեվ գիտեն, թե
վորն ե մեր ցավոտ տեղը: Յեվ ահա
մենք պարտավոր ենք նրանց հնարա-
վորություն տալ՝ աշխատելու յեվ սո-
վորելու: Նրանք պետք ե սովորեն կեն-
դանի գործում, գործարաններում, ար-
հեստանոցներում, արհմիություններում,
կուս-բջիջներում յեվ կոռպերատիվե-
րում: Յեթե գուռունեսքոց, գիտություն,
յեռանդ, համառություն յեվ վորյեվե
տաղանդ—իսկ մեր ժողովուրդը տաղան-
դավոր ե, տաղանդներ քիչ չեն գտնվի
«ցածր» խավերում,—այդ դեպքում հարգ
ու պատիվ քեզ, ցնւց տուր, վոր գու-
կարող ես աշխատել, իսկ յեթե կարո-
ղանաս կատարել քեզ հանձնարարված
աշխատանքը, ապա քեզ կհանձնեն մի
ուրիշ, ավելի դժվարին յեվ ավելի մեծ
աշխատանք: Մարդիկ պետք ե սովորեն
կենդանի գործի ընթացքում: Այդպես ե
կտակել մեզ Ընկ. Լենինը: Նա ան-
սպառ հավատ ուներ դեպի բանվորա-

կան մասսաները, այսինք դեպի նրանք,
վոր կոչվում են „ցածր խավեր“: Նա
հավատում եր աշխատավորության միլ-
իոններին: Նա հասկանում եր մեծ նը-
շանակությունն այն պիոններների, վո-
րոնք վստահ առաջ են գնում մինչև իսկ
այն ժամանակ, յերբ մասսան դեռ տա-
տանվում ե: Յեվ նա ինքը կարողացավ
լինել առաջինը: Համարյա մենակը, թըշ-
նամինների խաչաձեվ կրակի տակ՝ յերբ
բանվոր դասակարգը դեռ կանգնած եր
մի կողմը, յերբ բանվոր դասակարգը
դեռ անխօս եր, ընկ. Լենինը կարողա-
նում եր պայքարել իր գաղափարների
համար: Այն ժամանակ նա, ավելի քան
վորեկ մեկը, վստահություն եր տա-
ծում դեպի մասսան, դեպի շարքային
աշխատավոր մարդը, վորին, ասում եր
նա, վոչ միայն պետք ե սովորեցնել, այլ
վորից և պետք ե սովորել, վորին
պետք ե վոչ միայն ասել, այլ և վո-
րին պետք ե նաև լսել կարողանալ:

Նա հավատում եր մարդկային միջիններին, նրանց կոլեկտիվ բանականությանը, նրանց պայծառ մտքին։ Այժմ յեկել ե մոմենտը, յերբ այդ միջին բանվորները մեր կուսակցության ղեկավարությամբ կարող են և պետք ե սկսեն այդ շինարարությունը։ Ուրեմն, մեր առաջ դրված ե մի մեծ խնդիր՝ յուրաքանչյուրին տալ համապատասխան աշխատանք։

Բոլոր կոմունիտերը կուսակցության մեջ
հավասար են

Մենք համոզված ենք, վոր կուսակցության հին անդամների և նորեկների միջեւ չի ստեղծվի և վոչ մի սահման, վորովհետեւ բոլորն ել կուսակցության միատեսակ անդամներն են հանդիսանում։ Վորքանով վոր խոսքը բանվորների մասին ե, վոչ մի բաժանում չպետք ե լինի, բջիջում պետք ե լինեն բոլորը հավասար, ինչպես նր մնք, վորոնք մի քանի տարի աշխատաւմ են, այնպես և նրանք, ովքեր նոր են մտել։

Այն ընկերները, վորոնք ունեն մեծ փորձառություն՝ իրենց գործնական աշխատանքով կկարողանան ձեռք բերել մեծ ազգեցություն։ այնպես վոր, իրենք բանվորները՝ ընդունելով նրանց վորպես ավելի փորձառու, վորպես ավելի խճացող, կըսեն նրանց խորհուրդները։ Բայց վոչ վոք վոչ մի գեպքում իրեն համար չպետք ե պահանջե ձեռվական արտօնություններ։ Ամեն մի կազմակերպչից պետք ե հարցնեն, թե նա ինչպես ե բաշխել աշխատանքները իր կոլեկտիվի անդամների միջեւ։ Իսկ մենք այժմ ունենք 500 և ավելի անդամներից բաղկացած կոլեկտիվներ։ Առաջ մեր կոլեկտիվները բաղկացած են 50 հոգուց և այդ 50-ից յուրաքանչյուրը տանում եր տասնյակ պարտականություններ և այդ տասը պարտականությունները կատարում եր վոչ այնքան լավ։ Այժմ՝ յերբ կոլեկտիվը բաղկացած կլինի 500 հոգուց՝ կազմա-

կերպիչը կարող է կոլեկտիվի յուրաքանչյուր անդամի վրա դնել մեկ, ամենաշատը յերկու պարտականություն։ Բայց այդ գեղագում նա կարող է հսկողություն ունենալ յուրաքանչյուրի վրա, յուրաքանչյուրին հսարավորություն կը տա հանդես բերելու նախաձեռնություն և աշխատանք։ Այժմ մենք ամեն մի կազմակերպչին կ'հարցնենք, թե ինչպես են նրա կազը անկուսակցականների հետ, թե ինչպես են տարվում արտադրության բարձրացման մասսայական աշխատանքը, ում ենա ուղարկել Արհմիություն, ում են ուղարկել բնակարանային ընկերություն, կոռակերատիվ և ազն։ Բայց, իհարկե, նման աշխատանքը վոչ մի կազմակերպիչ չի կարող կատարել, յեթե մենք բոլորս նրան չոգնենք։

III ՏԱՍՆ ՅԵՎ ՀԻՆԳ ԿԱՆՈՆՆԵՐ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Նախ քան այդ նոր աշխատանքին դիմելը՝ յես կցանկանայի ընկերների ուշադրությանն առաջարկել մի քանի կանոններ, վորոնք մեր կուսակցության փորձի արդյունքներն են հանդիսանում։ Այդ կանոնները գուցե պետք կդան ընկերներին իրենց աշխատանքների ընթացքում։

Կոմմունիստ մտնում է կուսակցության մեջ վոչ անձնական բարիքի համար

Առաջինը, վոր պետք է իմանա և հիշե կուսակցության մեջ մտնող ամեն մեկը, այդ այն ե, վոր նա ուղունում է կուսակցության մեջ վոչ թե ինչ վոր անձնական բարիքի և արտոնությունների համար, այլ բանվոր դասակարգի ոգտին աշխատելու համար։ Էնկ. Լենինը 1919 թվին գրել ե. «Կու-

սակցության ցուցամոլ անդամները մեզ
հարկավոր չեն՝ յեթե ձրի ել տրվեն։
Մենք կուսակցության մեջ մտնողնե-
րին վոչինչ չենք խոստանում մենք մի-
միայն նրանց կոչում ենք բանվոր գա-
սակարգի համար կատարվող մեծ աշ-
խատանքին։ Մենք նրանց ասում ենք.
յեթե ցանկանում եք մեզ հետ աշխա-
տել հոգուտ բանվոր գասակարգի, ահա
ձեզ պատիվ և հարգ. մենք, ձեզ կըն-
դունենք ընկերական գրակախառնու-
թյամբ, բայց իմացեք, վոր ձեզ չեն
սպասում անձնական բարիքներ ու ար-
տոնություններ, այլ սպասում ե աշ-
խատանք՝ ամբողջ բանվոր գասակարգի
համար»։

Նվիրվիր կուսակցության ամբողջապես

Յեկրորդ՝ յեթե մտնում ես կու-
սակցության մեջ, դու պետք ե իմա-
նաս, վոր նվիրվում ես նրան ամբող-
ջապես՝ առանց մեացորդների։ Վորտեղ
քեզ ուղարկեն՝ այնտեղ ել պետք ե զը-

նաս։ Մենք պետք ե ասենք, վոր վե-
րաբերվելու ենք այնպես, ինչպես ընկ.
Լենին ե սովորեցրել մեզ. յեթե մըտ-
նում ես կուսակցության մեջ՝ դու ամ-
բողջովին նվիրվում ես կուսակցու-
թյանը։ Յեղել են ժամանակներ, յերբ
մենք մոբիլզացիայի ենք, յենթարկել և
ֆրոնտ ենք ուղարկել մեր ընկերներին։
Այժմ ֆրոնտներ չկան, բայց կուսակ-
ցությունը այն ւամենայնիվ իր ան-
դամներին ներկայացնում ե չափա-
զանց լուրջ պահանջներ։ Այդ բանին
կուսակցության յուրաքանչյուր անդամ
պետք ե ընտելանա։ Յուրաքանչյուրը
ձեզնից պետք ե ապրի կուսակցության
հետ միևնույն կյանքով և պետք ե
իմանա վոր ինչքան թեթև կլինի բան-
վոր գասակարգի վիճակը այնքան ել
թեթև կլինի իր վիճակը։ Ով չի կա-
րող իրեն ամբողջովին տրամադրել կու-
սակցությանը, նա ավելի լավ ե չմտնի
կուսակցության մեջ, այլ ժամանակ առ
ժամանակ ոգնի կուսակցությանը։

Կուսակցությունը յեվ Կրոնը

Յերբորդը՝ լրիվ հաշիվ տուր քեզ կրոնի ինդրում։ Դա չափազանց անհանգստացնող խնդիր է, բայց և անհրաժեշտ է դնել։ Յեթե դու կրոնապաշտ ես՝ ապա կուսակցության մեջ լինել չես կարող։ Կուսակցությունը չի վիրավորում կրոնը, այլ չափազանց համբերատար է վերաբերվում դեպի նա։ Կուսակցությունը հասկանում է, թե ինչու մեզ մոտ, այժմս, այնքան շատ կրոնապաշտ մարդիկ կան և չի հրաժարվում ամեն մի բանվորի կամ գյուղացու հետ աշխատակցելուց՝ պատճառաբանելով, թե նրանք կրոնապաշտ են։ Բայց այդպիսի մարդուն մենք կուսակցության մեջ չենք ընդունում։ Յեթե կրոնապաշտ ես՝ ըստափր, դեռ մի մտնիր կուսակցության մեջ, փորովինետեղ կուսակցությունն ըդբաղվում է այնպիսի դժվարին ու բարդ յերկրացին գործերով, վոր յեթե վճռաւ-

կան բոպեցին աստվածը մեջ խառնվի՝ ապա դրանից վոչ մի լավ բան չի կարող դուրս գալ։ Յեթե դու մտնելու յես կուսակցության մեջ և սկսելու յես մտածել, թե նետո քեզ դրա համար մցուս աշխարքում կաթսալում կտապակեն, ապա լավ է այդ գեպքում չմտնես կուսակցության մեջ։ Ի՞նարկե, այդ հարցը անհանգստացնող հարց է։ Չի կարելի մարդուն հրամայել, վորպեսզի դադարի աստծուն հավատալուց։ Նորելու ինձ պատճում ելին մի այսպիսի դեպք։ Մի ժողովում, ուր կուսակցության մեջ նոր անդամներ ընդունելու հարցն եր դըրված, մի տարիքավոր բանվորուհի դիմում եր տվել՝ կուսակցության մեջ մտնելու ցանկություն հալանելով։ Բջիջում հարց ելին տվել, թե արդյոք փորեե մեկը գեմ է։ Մեկը դուքս ե յեկել և ասել ե։ Յես դեմ եմ։ Պարզվել ե, ասողը բանվորունու փորդին ե։ Նրան հարցնում են, թե ինչու յես դեմ։

Նա պատասխանում է, մայրս շատ լավ
մայր ե, բայց հավատում ե աստծուն և
չի թուզ տալիս, վոր կրոնական պատ-
կերները պատից իջեցնենք. և յերբ
Վլադիմիր Իլիչը մեռավ՝ մայրս գաղտնի
գնաց և աղոթեց Իլիչի համար: Հար-
ցընում են մորը: Նա պատսսխանում
է, վոր այդպիսի մեղք յեղել ե, վոր
ինքն այնպես ե սովորել և կարծել ե,
վոր այդ Վլադիմիր Իլիչի համար լավ
կլինի և զնացել աղոթել ե: Այդ բան-
վորուհուն կուսակցության մեջ ընդու-
նեցին, վորովհետեւ շատ լավ մարդ եր
նա, բայց նշանակեցին—ինչպես այստեղ
ասված ե—հակակրօնական ամիս, վոր-
պեսզի այդ ամսվա ընթացքում բան-
վորուհին մտածի կրոնի մասին: Այդ
որինակով մենք տեսում ենք, վոր բան-
վոր դասակարգի մեջ լինում են շատ
թանգարժեք մարդիկ, վորոնք պատ-
րաստ են ամեն բան տալու բանվորու-
թյան շահերի համար, բայց վորոնք դեռ

չեն կարել իրենց կապն անցյալից:
ի հարկե, մենք նման մարդկանց չը
պետք ե հեռացնենք մեղանից, պետք
ե նրանց հետ խոսենք, պետք ե համո-
զենք նրանց: Բայց ընդհանուր առմամբ
բոլորն ել պետք ե իմանան, վոր
կուսակցությունը և կրոնը տարբեր
բաներ են: Կոմ կրոնը պետք ե ընդու-
նել, կոմ կուսակցությունը:

**ՄԵՐ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ԿՈՒ-
ՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ Ե**

Զորբորդը մենք պետք ե հիշենք, վոր
մեր կուսակցությունը բանվորական
կուսակցությունն է: Մենք ընդունում
ենք կուսակցության շարքերը և՛ գյու-
ղացիներին և՛ ծառայողներին և՛ առան-
ձին ինտելիգենտներին, բայց հիմնակա-
նում մեր կուսակցությունը պետք ե
մնա բանվորական:

**ՄԵՐ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԲԱՆՎՈ-
ՐՈՒԹՅԱՆ շարքերը նոսրանալու վրա ե-
րին: Այժմ նրանք կրկին ամրանում են՝**

շնորհիվ նոր կոչի ընթացքում ընդունվողներին։ Մենք պետք ե աշխատենք, վորպեսզի մեր կուսակցության մեջ 90 տոկոսը բանվոր լինի, վորովհետև մեր կուսակցությունը պետք ե մնա նաև և առաջ իբր պրոլետարական, բանվորական կուսակցություն։

Թ. Կ. Կոմիտեների մի մասն ե

Հինգերորդը՝ մենք պետք ե հիշենք, վոր մենք միջազգային կուսակցություն ենք։ Մենք Կոմինտերնի մի մասն ենք, Մոտ որեքս մենք տոնեցինք Կոմինտերնի 5-ամյակը։ Կոմինտերնի մեջ մտնում են 52 կուսակցություններ։ Մենք հանդիսանում ենք այդ 52-ից մեկը։ մենք Միջազգային Բանվորական Ընկերության մի մասն ենք և բացի մեր յերկում ունեցած պարտականություններից՝ ունենք միջազգային պարտականություններ։ Մանելով կուսակցության մեջ՝ մեզնից յուրաքանչյուրը դառնում ե Կոմինտերնի անդամ։ Նա

այլևս ծովի ավագի մի հատիկ չե, այլ միջազգային պրոլետարական բանակի զինվոր ե։

Կուսակցությունը յեվ կարգապահությունը

Վեցերորդը՝ անհրաժեշտ ե կարգապահություն։ Բանվորին, ընդհանուրապես, կարգապահությունը չի վախեցնում։ Բանվորները սովորել են կարգապահության, բայց պետք ե ասել, վոր կարգապահությունն այնքան ել հաճելի բան չե, վոր ամեն մարդ ուրախությամբ ընդունե։ Կարգապահության լուծը յերբեմն սեղմում ե ալդ լուծը կրողի վիզը և յես կարծում եմ գլխավոր տարբերությունը կուսակցության հին և նոր անդամների միջև կայանալու յե նրանում, վոր հին անդամների մեծամասնությունն այս տեսակետից մեծ կայունություն ունի։ Նրանք կուսակցական պրոլետարական կարգապահության լծին վարժվել են։ Նրանց ծոծրակը մաշվել ե։ Բայց յես վախենում եմ, վոր

նոր անդամների այդ կողմը, սկզբնական շրջանում, յերբեմն թույլ կլինի և նրանք դժվարությամբ կտանեն այդ լուծը։ Այդ խնդրի վրա պետք է մտածել՝ նախ քան կուսակցության մեջ մտնելը։ Մեզ անհրաժեշտ ե յերկաթյա պրոլետարական կարգապահություն, վորովհետև մենք պայմանավորում ենք թշնամիների մի ամբողջ աշխարհի դեմ։ Առանց արդ կարգավահության մենք չենք կարող աճել, առանց նրան մենք կկործանվենք։ Կուսակցությունը կաժավոր միտություն ե և վոչ վոքի նրա մեջ ուժով չենք քաշում։ Բայց մտնելով կուսակցության մեջ՝ դու պետք ե ընդունես նրա կանոնները, նրա վորոշումները։ Ինչ վոր վորոշված ե կուսակցության կողմից՝ դա սրբություն ե։

Վերջերս մենք դիսկուսիա եյինք տանում այն բանի շուրջը, վոր ընկերների մի մասը պահանջում եր՝ «քննադատության» ազատություն, վորպեսզի

կուսակցության մեջ թույլ տրվեն ֆրակցիաներ և հոսանքներ։ Բայց կուսակցությունը չհամաձայնվեց այդ բանին, վորովհետև ընկ. Լենինը այդ չեր սովորեցրել մեզ—արդ չե սովորեցնում մեզ պրոլետարիատի ամբողջ կուսակցությունը։ Լենինը մեզ սովորեցրել ե, վոր կուսակցությունը մի կտոր մետաղից ցուլված պետք ելինի։ Կուսակցությունը միայն այն ժամանակ կարող ե իր յետեկից տանել բանվոր դասակարգը, յերբ նա իրենց մի ամերողջություն ներկայացնե։ Իսկ այդ նշանակում ե, վոր կուսակցության մեջ պետք ելինի յերկաթե դիսցիպլինա։ Կուսակցության մեջ մտնելով՝ պետք ե վաղորոք ինկատի ունենալ, վոր քեզ վրա վերցնում ես կարեոր և լուրջ պարտականություններ։ Ընկ. Լենինը դեռ 1902 թվին իր հրաշալի «ինչ անել» գրքում գրել ե, թե կուսակցությունը միատեսակ մտածողների կամավոր

միություն ե, վորի մեջ մտնողները
ձեռք ձեռքից բռնած գնում են նեղ ճա-
նապարհով, իսկ ճանապարհի յերկու-
կողմն անդունդներ են: Յեթե մտերիմ-
ների ու միատեսակ մտածողների մեջ
տարածայնություններ լինեն, ապա ան-
պայման նրանց կհրեն նեղ ճանապարհոց
և նրանք կընկնեն այս կամ այն ան-
դունդը: Վորպեսզի խոսափենք բոլոր
անդունդներից և չնետվենք այդ ան-
դունդները՝ մենք պետք ե ձեռք ձեռքի
տված՝ միացյալ ուժերով անցնենք պատ-
մության ամենադժվարին տարիները:
Այդ տարիները գեռ չեն անցել, չնա-
յած մենք այժմս նեղ ճանապարհով
չենք քայլում այլ ափելի լայն ճանապար-
հով, վորի տակ պըոլետարիատի դիկտա-
տուրայի յերկաթե հիմքն ե դրված:

Բայց վաանդները մեզ գեռես հսկում
են ամեն կողմից: Յեկ մանր բուրժուա-
զիան, և խոշոր բուրժուազիան գեռ գը-
լուս են ջարդում, թե ինչպես վոքն-

չացնեն բանվորական կազմակերպու-
թյունները: Այդ պատճառով, գուք՝ կա-
մավոր համաձայնությամբ, ձեռք ձեռ-
քի տված, համախրված պետք ե գնաք
պըոլետարիատի դիկտատուրայի դժվար
ճանապարհով:

Յուրաքանչյուր կոմմունիստ պետք ե
իմանա կուսակցության պատմությունը
Յոթերորդ գը՝ կուսակցության յուրա-
քանչյուր անդամի պարտականությունն
ե գոնե քիչ ծանոթանալ մեր կուսակ-
ցության պատմության հետ: Ով չգի-
տե կուսակցության պատմությունը,
նա չի կարող լինել նրա գիտակից ան-
դամը՝ մինչեւ անդամ այն ժամանակ,
յեթե նա վառ սիրու ունենա և խորը
նվիրվածություն դեպի գործը: Ծանո-
թանալ կուսակցության պատմության
հետ հարկավոր ե նրա համար, վորպես
զի իմանանք, թե նա ինչպիսի դժվա-
րությունների միջով ե անցել, ինչպի-
սի զոհեր ե տվել ինչպես ե պաքա-

ըել մենշիկների, ես-երների, լիկվիդատորների, «հաշտականների» դեմ, ինչպիսի տանջանկներ ե ապրել, ինչպես ե գուրս յեկել դժվարություններից, և ինչպես են առաջ յեկել ու ամրացել նրա կազմակերպությունները: Միմիայն այսպես կարելի յէ ուսումնասիրել լենինիզմը:

ԵԵԲԱԴԱՍԻՎՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Ութերորդը՝ դա ինքնաշխատությունն ե: Ով առաջ չի գնում նա յետ ե մնում: Մեր ժամանակներում մի տեղ կանգնել չի կարելի: Կուսակցության նոր ընկերներին կուսակցությունը կաշակցի այդ աշխատանքում թե լրագրի կոլլեկտիվ բաժանորդագրությամք և թե խմբակների ու դպրոցների կազմակերպմամբ: Բայց այնուամենայնիվ զիսավոր աշխատանքը պետք ե անեն ճենց իրենք ընկերները: Գոնե մի քիչ բայց այնուամենայնիվ միշտ պետք ե սովորել, թեկուղությունը յեկան է առաջարկած անդամներից, վոր սովորելու հնարավորություն են ստանում: Մեզ մոտ աշխատում են միայն 8 ժամ, իսկ բանվորների նյութական գրությունը սկսել ե լավանալ: Կուսակամեն մի շարքային նոր անդամ պետք

թացքում կարդալ ընկ. Լենինի մի վորեե փոքրիկ գրքույկը: Բայց պետք ե կարդալ ինչպես հարկն ե, վորովհետեւ այն տեղ, ընկ. Լենինի գրքերում, պարզ և խտացած կերպով, շարադրված ե պայքարող բանվոր դասակարգի ամբողջ փորձը: Ինքնադաստիարակությամբ պետք է պարապել նրա համար, վորպեսզի ինչպես հարկն ե տանես քո աշխատանքը ամեն տեղ, ուր ել վոր կուսակցությունն ուղարկի քեզ, իւ նոր անդամին — բնակարանային լնկերությունները, կոոպերատիվները, դպրոցները, հիվանդանոցները — ամեն տեղ, ուր նրանք կգործադրեն իրենց ուժերը: Այդ պատճառովնոր ընկերները պետք ե սովորեն՝ ոգտվելով այն հանգամանքից, վոր սովորելու հնարավորություն են ստանում: Մեզ մոտ աշխատում են միայն 8 ժամ, իսկ բանվորների նյութական գրությունը սկսել ե լավանալ: Կուսակամեն մի շարքային նոր անդամ պետք

Ե ինքնաղաստիարակությամբ զբաղվի:
Ով այդ չի անի, նա յետ կդնա: Այժմ
յուրաքանչյուր ամիսը նոր պահանջներ
ե առաջադրում, հսկայական նշանա-
կություն ունեցող նոր հարց ե բերում:
Կյան ը բարդանում ե. պետք ե սովորել,
պետք ե բարձրացնել սեփական կուլ-
տուրական և քաղաքական մակարդակը:

Կապ անկուսակցականների հետ

Ինն երորդը՝ անկուսակցականնե-
րի հետ կապ հաստատելն ե: Զեզնից
շատերը հենց յերեկ գեռ անկուսակցա-
կան եյին, և ահա, վոչ մի գեպքում
դուք չպետք ե կտրեք կապն անկու-
սակցականների հետ: Յերբեմն մեզ
մոտ ասում են՝ կուրս պահիր գեպի
կուսակցության նոր անդամները և վոչ
թե գեպի անկուսակցականները: Հարցն
այդպես դնելը սխալ ե: Վաչ, անկուսակ-
ցականներին մենք չպետք ե մոռանանք.
այսուամենայնիվ, բայսվորության մեծ
մասը գեռ անկուսակցականներ են: Ա

նրանց հետ կապ պիտի պահպանեն
հատկապես նրանք, վորոնք արտադրու-
թյունից չեն հեռանում և չեն գնում
պետական վորնե աշխատանքի: Այդ
կապը անկուսակցականների հետ թար-
մություն ու ուժ ե տալիս մեզ: Այժմ
մենք ունենք 100,000 ընկերներ, վո-
րոնք մտել են մեր կուսակցության
մեջ: Մի տարի հետո մենք հարց կը
դնենք կուսակցության մեջ յերկրորդ
հայրուր հազարն ընդունելու նրանցից,
վորոնք այսոր անկուսակցական են: Յեվ
ահա, գուք, վոր գեռ յերեկ անկուսակ-
ցական եյիք, չպետք ե շարունակեք վե-
րիկց ներքեւ նայել դեռ ևս անկուսակ-
ցական մնացող ընկերների վրա: Այս,
մերթ կարելի յե ծիծաղնել նրանց վրա,
ովքեր շարունակում են մնալ անկու-
սակցական, բայց վոչ այսպես, ինչպես
ծիծաղում ե թշնամին հակառակորդի
վրա, այլ ընկերաբար: Մենք մոտենում
ենք այն ժամանակին, յերբ բա՛վոր

դասակարգն ամբողջապես պետք է մըս-
նի մեր կուսակցության շարքերը:

Կապ գյուղացիության հետ

Տասս էր որ դը՝ գյուղացիության
հետ ունենալիք կապը: Այդ կապն ամե-
նից շատ յեղեկ է կարմիր բանակում,
վորտեղ իրար հանդիպում եյին բան-
վորներն ու գյուղացիների: Այժմ կար-
միր բանակը նշանակալից չափով զո-
րացրման է յենթարկվել: Գյուղացիու-
թյան հետ կապ կարող ենք հաստատել
միայն ձեր միջոցով, բանվորների մի-
ջոցով: Դուք պետք ե ոգնեք մեզ գյու-
ղացիության կազ Խակերպման գործում:

Սկսենք փոքրից, գյուղը նամակ ու
լրագիր ուղարկելուց: Շատերը ձեզանից
գյուղում ունեն ազգականներ և նամակա-
զրությամբ կապված են նրանց հետ.
Պետք է ոգտագործել նաև ծննդավայր
մեկնելը, և վերջապես՝ պետք է կազմել
բանվորների ու գյուղացիների կապի,
մերձեցման ընկերությունների: Գուցե-

մենք այստեղ ոգտվենք հայրենակցական
միություններից՝ ինչպես մենք մի ժա-
մանակ անում եյինք, և գուցե կաշխա-
տենք կազմակերպել այդ ընկերու-
թյունների աշխատանքը հայրենակցա-
կան սկզբունքով: Որինակ՝ կհավաքվեն
50 բանվոր կոմմունիստ Սյոլենսկու
նահանգից և մի փոքր կմտածեն Սմո-
լենսկի նահանգի գյուղացիների մասին,
ինչով վոր կկարողանան՝ կոգնեն,
կամրացնեն կապը: Բանվորը յերկրի
զլիավոր ուժն է: Բանվորը յերկրի տերը,
արմատը, հեգեմոնը, և զեկավարն է:
Նա պետք է մտածե իր նշանակու-
թյամբ յերկրորդ տեղը գրավող դա-
սակարգի՝ գյուղացիության մասին:
Այժմ գյուղացիության հետ կապվելու
խնդիրը նոր ձևով է դրվում: Նոր հարյուր
հազարավոր բանվոր կոմմունիստներ
պետք է դիմեն այդ գործին: Գյուղի
կազմակերպումը սկսվում է քաղա-
քում: Բանվորները գյուղացիության

մասսայական կազմակերպիչները պետք
ե դառնան:

Կանանց ազատագրումը

Տասն և մեկ յ եր որդը՝ դա կանանց
ազատագրումն եւ Արա մասին ևս պետք
ե մտածել: Ընկ. Լենինը չափազանց
շատ ե մտածել այդ մասին: Նա միշտ
մտածում եր այսպիսի հարցերի մասին,
վորոնք կապունելին միլիոնավոր մարդ-
կանց հետ: Կանանց ազատագրումը
այսպիսի հարցերից մեկն ե: Այդ աս-
պարեզում մեզ մոտ շատ քիչ բան ե
արված: Ի հարկե, հեղափոխությունը
հայտարարեց կանանց ազատություն,
բայց յ դ քիչ ե: Այդ պետք ե կիրառել
կյանքում: Կանայք շատ կան արդյոք
մեր խորհուրդներում: Շատ են նրանք
պետական վարչություններում, գոր-
ծարաններում: Ի հարկե, մենք պետք ե
ձգտենք իսկական հավասարության:
Ցուրաքանչյուր կոմմունիստ պետք ե
նախ և առաջ ինքն տշխատե, վորպեսզի

կանայք քիչ թե շատ հավասար կերպով
մասնակցեն հասարակական կյանքին:
Բայց մենք բոլորս պետք ե աշխատենք,
վորպեսզի այդ կիրառվի կյանքում,
ամբողջ բանվոր դասակարգի և ամբողջ
գյուղացիության շրջանում: Այդ խըն-
դիրը հեղափոխության արմատական
հարցերից մեկն ե: Դա ընկ. Լենինի
կտակներից մեկն ե: Յես զիտեմ, վոր
այս խնդրում դեռ ևս շատ նախա-
պաշարումներ գոյություն ունեն անգամ
մեր լավ կոմմունիստների մեջ, վորոնք
կատակով ասում են՝ «գրանք կնանիք
են» կամ» սագերը յերկար և խելքը
կարձ» և այլն: Դա վայել չե կոմմու-
նիստին: Մասնելով կոմկուսակցության
մեջ, պետք ե վերջ տալ նման դատո-
ղությանը: Պետք ե հասկանալ, վոր
կանանց ազատագրման հարցը՝ ընկ.
Լենինի հիմնած մեր կուսակցության
ծրագրային կետերից մեկն ե:

Օգնիր յերիտասարդությանը

Տասնյակ քու, երորդը՝ յերիտասարդությանը ոգնելու հարցն եւ: Մեզ մոտ աճում ե յերիտասարդության գեղեցիկ սերունդ: Յերեխաները, վորոնք հեղափոխությունից առաջ 10-11 տարեկան ելին, այժմ 18-19 տարեկան պատանիներ են: Դրանք հասունացած մարդիկ են, դանոր սերունդն եւ: Այսոր մեզ մի բանվորուհի պատմում ե, թե ինչպես ինքը մտավ կուսակցության մեջ. «Յես ինքս ել եյի թերվում, բացի գրանից, իմ տղան կոմյերիտական ե, աղջիկս ել կոմյերիտուհի և նրանք յերկու տարի յե, վոր համոզում են ինձ. նրանք համոզեցին ինձ և յես մտա կուսակցության մեջ:» Յերեվում ե, վոր մեզ մոտ, բանվորների ընտանիքներում գոյություն ունեն ազիտբաժիններ, վոր հանդիսանում են կոմյերիտականները. նրանք ագիտացիայի յեն յենթարկում

իրենց ծնողներին: Անկասկած, մեր ժամանակակից յերիտասարդությունն ունի նաև իր պակասությունները, զորոնց վրա չպետք ե աչք փակել, այլ պետք ե դրանց մասին խոսել առանց թաքցնելու, աշխատելով վերացնել այդ: Բայց ընդհանուր առմամբ պետք ե ասել, վոր մեզ մոտ զարգանում ե հրաշալի յերիտասարդ սերունդը, վոր կը լինի կոմմունիզմի խսկական ծաղիկը: Մենք պետք ե նրան ոգնության գանք գործարաններում, դպրոցներում, ֆաբրիկա-գործարանային դպրոցներում: Դանշանակալից ինդիբներից մեկն ե յուրաքանչյուր կոմմունիստի և ամբողջ մեր կուսակցության համար:

Աւտոտաների մեջ զիր բո ամբողջ հոգին

Տասնյերեք յերորդը՝ այդայն ե, վոր ամեն տեղ, ուր գու աշխատում ես, գու պետք ե աշխատանքի մեջ դընես քո ամբողջ հոգին: Կանգնած լի-

նես դու դազգահի առաջ, հանդիսանաս
գործարանի կառավարիչ, կամ կարմիր
դիվանագետ, կանանց պատգամավորու-
հի, կամ կոռալերատոր, պրոֆեսիոնալիստ
կամ կառուցող, կամ հող վարող - միեւ-
նույն ե, ուր ել ընկնես, դու պետք ե
գործադրես մաքսիմում սեր դեպի աշ-
խատանքը, դու պետք ե հասկանաս, վոր
աշխատանքի փոքրիկ ճակատում դու
կրում ես մեծ պատասխանատվություն,
այն գործի համար, վոր դու կատարում
ես:

**Սուածինը լեզիր մասսայական
կազմակերպություններում**

Տասնչորսյական այն ե, վոր
բանվորական մասսայական բոլոր կազ-
մակերպություններում — արհմիու-
թյուններում, կոռալերատիվներում, լու-
սավորչական — կազմակերպություննե-
րում — դու պետք ե լինես առաջնօր, վո-
րովհետև այստեղ ե սոցիալիզմի իսկական
դպրոցը, այստեղ ե բարձրանում բանվոր-

ներինոր սերունդը: Վորտեղից մենք վեր-
ցըրինք ընկ. Կալիսինին, ընկ. Տոմոկուն,
վոր կանգնած ե ամբողջ արհմիություն-
ների գլուխը, և այլ աչքի ընկնող մեր
բանվոր առաջնորդներին: Վորտեղից
ենք մենք վերցըրել այն բոլոր ընկերնե-
րին, վորոնք ղեկավարում են՝ վորը
ամբողջ արհմիությունը, վորը ամբողջ
նահանգ, ամբողջ մի շրջան, և վորն ել
կանգնած ե ամբողջ խորհրդային իշխա-
նության գլուխը: Նրանք յեկել են մաս-
սայական կազմակերպություններից,
պրոֆմիություններից, կոռակերատիվնե-
րից, ակումբներից, վորտեղ նրանք
սովորում եյին սկիզբնական շրջանում,
վորտեղից նրանք առաջ են քաշվել: Ա-
հա դեպի այդ բանվորական մասսայա-
կան կազմակերպությունները և այլն ե,
վոր ձեզանից յուրաքանչյուրը պետք ե
ձգտի. յուրաքանչյուրը ձեզանից առա-
ջնը պետք ե լինի վոչ միայն զուտ
կուսակցական բջիջում, այլ նաև ան-

կուսակցական, բանվորական մասսայական կազմակերպություններում։ Այն մի անկուսակցական, բանվորական կազմակերպության մեջ գու կարող ես և պարտավոր ես քո աշխատանքով ծառայել մեր կուսակցությանը։

Կոմմունիստի կոչումը ամեն ինչից
բարձր ե

Տասնեհինգերորդը՝ դա այն ե,
վոր հիշես, թե չկա ավելի բարձր կոչում, քան Ռ. Կ. Կ.-ի անդամի և դրա հետ միասին Կոմինտերնի անդամի կոչումը։ Հիշեր, վոր պատկանում ես այն կուսակցությանը, վոր ստեղծված ե՞նկ. Լենինի և բանվոր դասակարգի լավագույն մարտիկների կողմից։

Հեղափոխության տարիների ընթացքում շատ անհարազատ տարրեր են փորձել մտնել մեր կուսակցության մեջ։ Նրանք աշխատում ենին իրենց կեղտուածեռքերով աղտոտել մեր դըոշը։ Բայց նրանց այդ չհաջողվեց։ Մենք նրանց

վոնդում ելինք հարյուրներով ու հաղարներով։ Մեր գրոշը մնաց անբիծ։ Այժմ, յերբ ամեն մի ազնիվ բանվորին իրավունք ե տրվում մտնել մեր կուսակցության մեջ, դառնալ նրա գըրոշակակիրներից մեկը, պետք ե գիտակցել այդ խնդրի ամբողջ կարուրությունը։ Ահա այն խորհուրդները, վոր յես կարող ելի ձեզ տալ։

IV. ԼԵՆԻՆԱՅՑՆ ԿՈԶԸ

Դուք բոլորդ մտնում եք մեր կուսակցության մեջ անմիջապես Վլադիմիր Իլիչի մահվանից հետո, վոր ցընցեց վոչ միայն մեր յերկրի բանվորների սրտերը այլ և ամբողջ աշխարհի աշխատավորությանը։ Զեզ արդեն անվանել են «Լենինյան կոչ»։ Ի հարկե, մեր ամբողջ կուսակցությունը հանդիսանում է Լենինյան կոչ, վորովհետև ընկ. Լենինը կանգնած եր նրա որորոցի մոտ։ Բայց դուք հանդիսանում եք նոր «Լենինյան կոչ»։ դուք լնդունվում եք կու-

սակցության մեջ այն ժամանակ, յերբ
մեր ուսուցիչը փակել ե աչքերն ընդ-
միշտ։ Այդ կորուստը վողբում են ամ-
բողջ աշխարհի բոլոր գիտակից աշխա-
տավորները — գյուղացիները Ալբանիա-
յում, նեղուերը՝ Ամերիկայում, և բան-
վորները՝ Զինաստանում։ Ամեն տեղ,
ուր կան գիտակից բանվորներ ու գյու-
ղացիներ, ամեն տեղ վողբում են
այդ կորուստը։ Դա մեծ սիմվոլ է։ Դուք
մտնում եք կուսակցության մեջ վո-
րոշ ուշացումով, բայց այնպիսի մոմեն-
տին, յեղբ ամբողջ կուսակցությունը
ցնցված ե մինչև խորքերը։ Դուք հաս-
կանում եք, թե դրանով ինչպիսի հըս-
կայական պարտականություններ են
դրվում ձեր բոլորիդ վրա։

Խճպես արածազանեցին բան-
գործերը Լենինի մահվան

Շատերի մեջ նկատվում եր անմիջա-
կան շարժում — Լենինը հեռացել ե.
հարկավոր ե շուտ մասնել կուսակցու-

թյան մեջ, հավաքվել սի տեղ, վորպես-
զի ոգնենք Լենինի փոխարինումին։ Դա
ճիշտ բնազդ եր, բանվորների դասա-
կարգային ուղիղ գիտակցություն։ Վոչ
միայն անշափ վողբը տիրեց մեզ բո-
լորիս, այլ նաև ելեքտրական կայծ
անցավ ամբողջ բանվոր դասակարգի մի-
ջով, ի մի հավաքեց նրա գիտակից մա-
սր։ Յեկ բանվորները, վորպես կրանքի
մարդիկ, գործնական պայքարողներ,
հենց սղի ըռպեյին առաջադրեցին նաև
գործնական լուծում։ Այդ գործնական
լուծումը կայանում եր նրանում, վոր
մասսայորեն մտնեն լնկ. Լենինի ըս-
տեղծած կուսակցության մեջ և ոգնեն
Լենինի փոխարինելուն։

Մեր առաջ հիմա պատմության մեջ
դեռ չտեսնված կերպով բացվեց բան-
վոր դասակարգի ամբողջ մեծությունը։
Զե՞ վոր վոչ վոք նախորոք չեր պայ-
մանափորվել, մեկ գործարանը չգիտեր,
թե ինչ եր մտածում մի այլ գործարան,

բայց այնուամենանիվ՝ ամբողջ Ռուսաստանում, ամբողջ հանրապետությունների Միության մեջ, մենք տեսում ենք միևնույնը։ Ամեն տեղ, ուր կան բանվորներ, նրանք միատեսակ արձագանքեցին Վլադիմիր Իլյիչի մահվանը։ Ինչ ե նշանակում այդ։ Դա նշանակում է, զոր 10.000 վերստ տարածության վրա ցըված սանվորների միջև գոյություն ունի անթել հեռագիր, զորը սրտից սիրտ ձգեց մի լուր - մեռել ե Լենինը։ Յեվ մի միտք վառվեց այդ բոլոր սրտերում, մտնենք կուսակցության մեջ, զորպեսզի միատեղ կատարենք այն մեծ աշխատանքը, զոր սկսեց Վլադիմիր Իլյիչը։ Մինչև հիմա աշխատանքը կատարվում եր նրա դեկավարությամբ։ Հիմա նա չկա՝ ուրեմբն նրան պետք ե փոխարինել։ Այդ անթել հեռագիրը հենց այն մեծությունն ե, զոր կա բանվոր դասակարգի մեջ։ Դա նրա բնազդն ե։ Նրա դասակարգային ուղիղ դգացմունքը։

Յեվ Վլադիմիր Իլյիչը տեսներ այն ինչ կատարվում ե ներկայումս, դա նըստա համար ամենամեծ պարզեց կլինիքը Նրա մահվանից հետո՝ մեր աշքերի առաջ մի անսահման մարդկային ծով ցընցըվեց։ Մենք տեսանք միլիոնավոր մարդիկ, չորս որ ու չորս գիշեր՝ 25 աստիճան ցըտի տակ, յերեխաները ձեռքներին՝ կանգնած սպասում ելին, զորպեսզի միմիայն մոտենան Վլադիմիր Իլյիչի մարմնին։ Յեվ բավական եր միայն մի քանի միլիցիոներ, վորպեսզի կարգ պաշտպանվեր։ Այդ նրանից եր, զոր ինչը մասսան կարգապահ եր, Բոլորը լուկ ել ելին, բոլորը հասկանում ելին, զոր ապրում են մի մեծ մոմենտ, Բոլորը հավաքվել ելին, մոտեցել ելին մի տեսակ իրարու, զորովհետեւ հասկանում ելին, թե հեռացավ մեզանից մեծ հանձարը։

Մեր ապագան

Այդ բոլորը միատեղ վերցրած՝ բոլորը

ինչ կատարվում ե մեր աչքերի առաջ՝
հույս ե տալիս մեզ, մեր ամբողջ կու-
սակցության, վոր մենք մեր առաջ դըր-
փած բոլոր մեծ խնդիրները կարող ենք
լուծել։ Յեվ այն հսկայական մասսան,
վոր իր փորձով կյանքի գիտությամբ,
սառնասրտությամբ, արիությամբ հո-
սում ե դեպի մեր շարքերը, ել ավելի
հուսագրում և աշխուժացնում ե մեզ
Յեվ ինչքան ել ծանր լինի մեր կորուս-
տը, մենք կարող ենք վստահությամբ
նայել դեպի ապագան։

1924 թիվը վատ տարի չե մեր տըն-
տեսության ու արդյունաբերության
կյանքում։ Բայց այդ տարին մեր որա-
ր սցույցի մեջ միշտ պատաժ կլինի սը-
զի շրջանակներում։ Վորովհետև այդ
տարում մենք կորցրինք լավերից լա-
վագույնին։ Կորցրինք նրան, ով կայծ
ներշնչեց բանվոր դասակարգին, ով հա-
վատում եր աշխատավորության բազ-
մամիլիոն մասսաներին։ Հավատում եր

նրանց՝ իբրև ստեղծագործողների — հաս-
տատ գիտեր, վոր հենց բանվորական
շրջաններում, բանվորական տնակնե-
րում են տրոփում լավագույն սրտերը։
1924 թիվը ծանր տօրի լե։ Ծանր տա-
րի յե ամբողջ միջազգային պրոլետա-
րիատի հաւաք։ Բայց տեսնելով բան-
վորների շարժումը դեպի մեր կուսակ-
ցությունը, կուսակցության հսկայական
աճումը ի հաշիվ բանվորների, «ժա-
ռանգական պրոլետարիատի» — վորը ու-
րիշ վոչինչ չի կարող ցանկանալ բացի
իր լերկրի ազատագրումից և նրա բարձ-
րացումից դեպի ամենավերին աստի-
ճանը, — մենք զգում ենք, վոր Լենինի
հանձարը մեզ հետ ե, մենք զգում ենք,
թե ինչպիս այդ հանձարի թևերը շար-
ժը վում են մեր ժողովների վրա։

Այս մտքով Լենինը չի մեռել։ Նա
կենդանի յե մեր կուսակցության մեջ
մտնող ամեն մեկի մեջ։ Տարիներ ու
տարիներ մենք կուսումնասիրենք

նրա զրքերը, նրա կտակները, նըրա
պատգամները: Մենք գիտենք,
թե մեզ համար ինչքան դժվար
կլինի կառավարել Ռուսաստանը,
հանրապետությունների Միությունը, և
ղեկավարել Կոմինտերնը առանց ընկ.
Լենինի: Մեզ հետ եր մի մարդ, վոր
տեսնում եր տարիներ, ամբողջ տաս-
նյակ տարիներ առաջ, վոր կարողանում
եր աշխատել ինչպես վոչ վոք, վոր կա-
րողացավ ձեռք բերել անչափ վատահու-
թյուն անգամ իր հակառակորդների կող-
մից. մի մարդ, վորի յետմից կարելի
յեր գնալ և գնում եյին չմտածելով
հավատարիմ անձնվիրությամբ ծառայե-
լով գործին: Ի հարկե, կորցնել այսպի-
սի ղեկավարի—դա ծանր հարված եր
կուսակցության համար: Բայց յեթե
մենք ցանկանում ենք լինել արժանի
մեծ Լենինին, ուրեմն պետք ե հիշենք,
վոր նա սովորեցրել մեզ յերբեք ընկ-
ճըվել: Տասնյակ տարիների ընթացքում

մենք կկատարենք մեր հիշատակի պարտ-
քը, վորովհետև Ռուսաստանը յերբեք
չի մոռանա լընկ. Լենինին: Հեռու չե-
այն ժամանակը, յերբ նոր տարեթիվը
կտարվի ընկ. Լենինի ծննդյան որից,
վորովհետև նա նոր դարաշրջան սրեղ-
ծեց մարդկության կյանքում, նա զած-
րից բարձրացրեց բանվոր զասակարգը,
վոր վարձու ճորտ եր: Լենինը նոր եջ
բացեց մարդկության պատմության մեջ:
Զեզ, Լենինյան կոչի որերին կուսակ-
թյան մեջ մտնողների վրա, մեզ հետ
միասին բաժին ե ընկնում շարունակել
այն մեծ գործը՝ վոր սկսել ե ընկ. Լե-
նինը: Դրա համար, յերբ վոր դուք դժ-
վարանաք, յերբ դիսցիպլինայի լուծը
մաշի ձեր վիզը, յերբ վոր ձեր մեջ ա-
ռաջ գան տատանումներ, յերբ չբավակա-
նանան ձերուժերը և դժվար աշխատանքն
ուժասպառ անի ձեզ, այդպիսի դժվար
ըոսկեներին թող ձեր առաջ կանգնի Լե-
նինի մեծ ղեմքը, վոր գիտեր մեծ տան-

ջանքներ ու զրկանքներ տաճել, բայց
զիտեր և ուղիղ նայել մահվան դեմքին
և զիտեր մի միտք, մի կըրք, մի ցան-
կություն—ծառայել իր ժողովրդին,
ծառայել միշաղղային բանվոր դաստ-
կարգին։ Նո, ինչպես վոչ վո՞չ՝ սիրում
եր աշխատանքի մարդկանց, հասարակ
աշխատավորներին։ Յեզ նրա դեկավա-
րությամբ բանվոր դաստկարգը ուղղեց
իր մեջքը, դարձավ հսկա դաստկարգ,
տիրեց մեծ յերկրին, վոր դեռ մի քա-
նի տարի առաջ տնքում եր սև հար-
յուրակային կալվածատերերի և ժան-
դարմների լծի տակ։

Եհնինից մենք ստացանք մեծ ծառա-
յություն։ Մենք բալորս, ձեզ հետ միա-
սին, մեծ աշխատանքի մասնակիցներ
ենք հանդիսանում։ Ամենամեծ դժվա-
րությունները մնացին անցյալում, բայց
դա դեռ չի նշանակում, թե հետագա-
յում ամեն ինչ հարթ ուղիղով կընթա-
նա։ Ի հարկե, դեռ քիչ դժվարություն-

ներ ու զրկանքներ չեն սպասում մեզ
յեր ճանապարհին, բայց ամենամեծ
դժվարություններից ընկ. Լւսինը մեզ
անցկացրեց։ Ուրեմն, յեկեք գնանք այն
ճանապարհով, վոր այդպիսի հզոր ճա-
ռագալթներով լուսավորեց Վկադիմիլ
իւթչը, վոր այդպիսի զարմանալի պար-
զությամբ ցույց տվեց ընկ. Լենինը և
հաւցնենք մինչև վերջ ընկ. Լենինի ըս-
կած մեծ դորձը։



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

I.	Կոմմունիստական կուսակցության պատմությունը	3
II.	Նոր շրջանի սկիզբը մեր կուսակցու- թյան մեջ.	27
III.	Տասնեհինգ կանոններ կուսակցության նոր անդամների համար	63
IV	Լենինյան կոչը	89

ՀՀ Ազգային գրադարան



NL0179411

